

4311

Մ Ե Ր
Հ Ա Ր Ե Վ Ա Ն
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

308

Մ-66

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԻՐԻ. ԿՆՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶ. ԸՐՈՍԿԳԱ, 1931

Ո Ս Ո Ա Վ Ի Ա Ք Ի Մ

308

Մ-66 սպ

ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խմբագրողը

Բանվոր Հայկի

(ԳԱՅԻ)

2001

2010

ԵՍԶՐ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ.

1931

1913/15



ԿԳՅԶԷԻՄ



6930-53

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՒԱՐԵՆ

Ընթերցող, հիշիր!

Պատերազմը անխուսափելի յե: Քանի վոր իշխանության ղեկը հարևան յերկրներում Արևմտյան Յեվրոպայում գրանվում ե բուրժուազիայի ձեռքում, մենք պարտավոր ենք լուրջ պատրաստվել մեր խորհրդային հայրենիքը պաշտպանելու համար:

Թշնամուն հաղթելու համար անհրաժեշտ ե նրան գիտենալ, իսկ գիտենալու համար հարկավոր ե նրան ուսումնասիրել:

Հենց դրա համար ել այս փոքրիկ գրքույքում համառոտակի տրվում են մեր հարևան յերկրների մասին ամենանհրաժեշտ տեղեկություններ:

Յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի, հանուն մեր յերկրի պաշտպանության, պետք ե այդ յերկրների մասին անհրաժեշտ տեղեկություններ ունենալ:

Բանվոր Հայկ (Գալ)

ՖԻՆԼՅԱՆԴԻԱ

ՎՈՐՏԵՂ Ե ԳՏՆՎՈՒՄ ՖԻՆԼՅԱՆԴԻԱՆ

Ֆինլյանդիայի սահմանները գտնվում են Լենինգրադից 30 վերստի վրա: Ֆինլյանդիայի պետությունն ունի մոտ 500 վերստ լայնություն և մոտ 1000 վերստ յերկարություն (388.483 ջառ. կիլոմ.):

Բռնելով բավական մեծ տարածություն (388.483 ջառակուսի կիլոմետր), Ֆինլյանդիան սահմանակից է 3 պետությունների. Շվեդիային (սահմանագիծն է 1,386 կիլոմ.), Նորվեգիային (983 կիլոմ. սահմանագիծ), ԽՍՀ Միությունը (1.590 կիլոմ. սահմանագիծ) և, բացի այդ, ունի ծովային սահմանագիծ Ֆիննական ծովածոցի և Բալտիկ ծովի ավտով (491 կիլոմ.):

Փամանակակից բուրժուական Ֆինլյանդիայի կառավարող խմբերի ամբողջ ուշադրությունը դարձած է ԽՍՀ Միության սահմանի և Ֆիննական ծովածոցի վրա, վորով անցնում են ամենակարևոր և համարյա միակ հաղորդակցության ճանապարհները Յեվրոպայի հետ և վորը ծովային պատերազմի ռազմաբեմ պիտի լինի ապագա կռվի մեջ մեր դեմ: Ֆինլյանդիայի ձգտումը— ասլահովել իրեն ծովի կողմից, զուգադիպեց Անգլիայի

ցանկութեան հետ՝ Ֆիննական ծովածոցում ռազմա-
ծովային բազաներ ունենալու խնդրում և զրա հետե-
վանքն յեղավ այն, վոր Ֆինլյանդիան ռազմական տե-
սակետից համարյա ամբողջապես գտնվում է Անգլիայի
ազդեցութեան տակ:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆինլյանդիան անունով «դեմոկրատական» հանրա-
պետութիւն է (հիմնվել է 1917 թ. դեկտ. 6-ին): Բարձ-
րագույն որենադիր իշխանութիւնը պատկանում է
սեյմին: Սեյմը միապալատ պարլամենտ է, նրա ան-
դամների թիվը 200 է, վորոնք ընտրվում են յերեք
տարով անմիջական ձայնատվութեամբ: Ընտրողական
ակտիվ իրավունք ունեն 24 տարին լրացած բոլոր
քաղաքացիները: Այդ ամենը, իհարկե, միայն թղթի
վրա յե գրված, իսկ փաստորեն, պարլամենտում և
իշխանութեան գլխին նստած են խոշոր և մանր բուր-
ժուազիայի ներկայացուցիչները և նրանց լակեյները՝
սոցիալ-դեմոկրատները:

Գերագույն գործադիր իշխանութիւնը պատկա-
նում է հանրապետութեան նախագահին, վորը ընտր-
վում է 6 տարով: Բացի այդ, գործադիր իշխանու-
թիւն է հանդիսանում նաև պետական խորհուրդը,
վորի մեջ մտնում են պրեմյեր-մինիստրը և բոլոր
մինիստրները, թվով 10:

Ֆինլյանդիայի բնութիւնը խիստ է: Ամբողջ Ֆին-
լյանդիան կտրված է քարքարոտ թլրակներով ու

ծածկված է հարուստ սոճի (շամի) անտառով: Ամ-
բողջ յերկրում կան բազմաթիվ լճեր, ճահիճներ, սրբն-
թաց գետեր, ջրվեժներ, կանաչներ: Չմեռն այն-
տեղ յերկար է — հյուսիսային, ամառը — կարճատե,
ցուրտ:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ

Յերեք և կես միլիոն բնակչութեան 65,1 տոկոսը
պարապում է հողագործութեամբ և անասնաբուծու-
թեամբ: Անտառներում, լճերի ու ճահիճների միջև
գյուղացին ստիպված է մաքրել գետինը, ծառերի
արմատները դուրս հանել, տեղափոխել հսկայական
ճալաքարերը: Անասունների արոտատեղի համար նա
ստիպված է չորացնել ճահիճները: Հողը քարքարոտ
է, վատ, պահանջում է մեծ պարարտացումն: Յորեն
համարյա չի բուսնում, ցանում են հաճար, վարսակ,
գարի, խոտեր, կարտոֆիլ: Մեծ դժվարութեամբ է
գյուղացին մեկ դեսյատինից ստանում 60 փութ հա-
ճար և 40 փութ վարսակ կամ գարի: Մոտիկ ծովը,
մեծ քանակութեամբ լճերը և անտառները բավականա-
չափ խոնավութիւն են տալիս, բայց ֆիննական գյու-
ղացին մի ուրիշ ցավ ունի: Յուրա ջամին յերաշից
ել վատ է և փչացնում է ցանքները:

Համառ աշխատանքով, խելքով ու հմտութեամբ
ֆիննական գյուղացին ժլատ հողից ջամում է բերքը:
Բայց այդ բերքն ընկնում է ուրիշների ձեռքը:
Ֆինլյանդիայում հողի տերը վոյ թե գյուղացին է,

ցանկութեան հետ՝ Ֆիննական ծովածոցում ռազմա-
ծովային բազաներ ունենալու խնդրում և զրա հետե-
վանքն յեղավ այն, վոր Ֆինլյանդիան ռազմական տե-
սակետից համարյա ամբողջապես դտնվում է Անգլիայի
ազդեցութեան տակ:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆինլյանդիան անունով «դեմոկրատական» հանրա-
պետութիւն է (հիմնվել է 1917 թ. դեկտ. 6-ին): Բարձ-
րագույն որենսդիր իշխանութիւնը պատկանում է
սեյմին: Սեյմը միապալատ պարլամենտ է, նրա ան-
դամների թիւը 200 է, վորոնք ընտրվում են յերեք
տարով անմիջական ձայնատվութեամբ: Ընտրողական
ակտիվ իրավունք ունեն 24 տարին լրացած բոլոր
քաղաքացիները: Այդ ամենը, իհարկէ, միայն թղթի
վրա յե դրված, իսկ փաստորեն, պարլամենտում և
իշխանութեան գլխին նստած են խոշոր և մանր բուր-
ժուազիայի ներկայացուցիչները և նրանց լակեյները՝
սոցիալ-դեմոկրատները:

Գերագույն գործադիր իշխանութիւնը պատկա-
նում է հանրապետութեան նախագահին, վորը ընտր-
վում է 6 տարով: Բացի այդ, գործադիր իշխանու-
թիւն է հանդիսանում նաև պետական խորհուրդը,
վորի մեջ մտնում են պրեմյեր-մինիստրը և բոլոր
մինիստրները, թվով 10:

Ֆինլյանդիայի բնութիւնը խիստ է: Ամբողջ Ֆին-
լյանդիան կտրված է քարքարոտ թլրակներով ու

ծածկված է հարուստ սոճի (շամի) անտառով: Ամ-
բողջ յերկրում կան բազմաթիւ լճեր, ճահիճներ, սրըն-
թաց գետեր, ջրվեժներ, կանաչներ: Զմեռն այն-
տեղ յերկար է — հյուսիսային, ամառը — կարճատև,
ցուրտ:

ԻՆՉՊԵՏ Ե ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ

Յերեք և կէս միլիոն բնակչութեան 65,1 տոկոսը
պարապում է հողագործութեամբ և անասնաբուծու-
թեամբ: Անտառներում, լճերի ու ճահիճների միջև
գյուղացին ստիպված է մաքրել գետինը, ծառերի
արմատները դուրս հանել, տեղափոխել հսկայական
ճալաքարերը: Անասունների արտատեղի համար նա
ստիպված է չորացնել ճահիճները: Հողը քարքարոտ
է, վատ, պահանջում է մեծ պարարտացում: Յորեն
համարյա չի բուսնում, ցանում են հաճար, վարսակ,
գարի, խոտեր, կարտոֆիլ: Մեծ դժվարութեամբ է
գյուղացին մեկ դեսյատինից ստանում 60 փութ հա-
ճար և 40 փութ վարսակ կամ գարի: Մոտիկ ծովը,
մեծ քանակութեամբ լճերը և անտառները բավականա-
չափ խոնավութիւն են տալիս, բայց ֆիննական գյու-
ղացին մի ուրիշ ցավ ունի: Յուրտ քամին յերաշտից
էլ վատ է և փչացնում է ցանքները:

Համառ աշխատանքով, խելքով ու հմտութեամբ
ֆիննական գյուղացին ժլատ հողից քամում է բերքը:
Բայց այդ բերքն ընկնում է ուրիշների ձեռքը:
Ֆինլյանդիայում հողի տերը վոշ թե գյուղացին է,

այլ հողատերքը կամ անտառագործը, վորոնց և գյուղացին վճարում ե արենդի համար:

Գյուղական ամբողջ բնակչութեան 40 տոկոսը հող բոլորովին չունեն: 26 տոկոսը — սակավահողատերեր են: Ամենալավ մշակված հողերը Ֆինլանդիայի հարավում գտնվում են խոշոր հողատերերի և անտառագործական ընկերութեաների ու գյուղական կուլակների ձեռքը: Նրանցից յուրաքանչյուրն ունի 250 դեսյատինից ավելի՝ ամեն մի մարդու համար: Միջակ աշխատավոր անտեսութեաները ունեն ամբողջ մշակելի հողի միայն 39 տոկոսը:

Ֆինլանդիայի գյուղացիութեան յերկու յերրորդ մասը ստիպված ե աշխատել արենդով վերցրած հողի վրա: Արենդի պայմանը կնքվում ե 10—12 տարով կամ առանց ժամկետը ցույց տալով, և գյուղացին ամեն տարի կարող ե գրկվել արենդով վերցրած հողակտորից: Հողի արենդի համար գյուղացին պարտավորվում ե սովորաբար յուրաքանչյուր 6—7 չափ հաճարի (վոր ցանում ե արենդով վերցրած հողի վրա) դիմաց շաբաթական մեկ ուր աշխատել տիրոջ համար:

Գյուղացի-արենդատորները, կամ «տորպարները», ինչպես նրանց անվանում են Ֆինլանդիայում, ամեն տարի կալվածատերերի գրպանն են լցնում մոտ 10 միլիոն ուլերի՝ արենդով վերցրած հողի համար: Բացի դրանից, նրանք պարտավոր են նաև պետութեանը վճարել ամեն տեսակի տուրքեր և հարկեր:

Արենդատոր-«տորպարներից» ավելի վատ գրութեան մեջ են գտնվում «բորիլ»-գյուղացիները (հողագուրկ գյուղացիները):

Ֆինլանդիայի գյուղացիների հողագրկութեան ու սակավահողութեանը, հողի վատ բերքայնութեանը, տուրքերի (հարկերի) լուծը յերկրի գյուղատնտեսութեան վրա ընկած են վորպես ծանր բեռ: Բնակչութեան միայն կեսին ե իր հացը բավականացնում: Ցանքսադաշտը համարյա թե չի ավելանում: Պակասող հացը ստիպված են ստանալ արտասահմանից:

Անբերրի հողից հաց ստանալու վատ պայմանները գյուղացիութեանը ստիպում են պարապել կաթնատնտեսութեամբ: Կաթնատու անասուններ շատ են պահում, և լավ ցեղի: Սակայն պրոդուկտը վաճառում են խոշոր գնորդները և զանազան գործարաններ: Պանիրը և յուղը արտահանում են արտասահման, գլխավորապես Սնգլիա:

Գյուղացիների մի մասը աշխատանք ե գտնում ատաղձագործարաններում, ձկնորսութեամբ պարապելով, վարձվում ե խոշոր տերերի մոտ վորպես բաւրակներ: Յեւ սակայն ամեն տարի Ֆինլանդիայից դեպի ուրիշ յերկրներ բանվորական ավելորդ ձեռքեր են դուրս գնում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինլանդիայի բանվորները կազմում են ամբողջ բնակչութեան մոտ 24,5 տոկոսը: Նրանց մեծ մասը

ապրում են վոչ թե քաղաքներում, այլ գյուղական վայրերում. դրա պատճառն այն է, վոչ Ֆինլյանդիայում գլխավոր արդյունաբերությունը կազմում է փայտի մշակումն՝ սոցիալականներում, աստղծագործարաններում: Փայտը գործադրվում է նաև թղթի գործարաններում՝ թուղթ պատրաստելու համար:

Քաղաքներում կան, գլխավորապես, շաքարի արդյունաբերություն, ծխախոտի ֆաբրիկաներ, նավակառուցարաններ, մեքենաների, մանուֆակտուրայի արտադրություն, կաշվի և վոսնամանի գործարաններ: Ֆինլյանդական թուղթն ու փայտը թանգ են գնահատվում և լավ վաճառվում են արտասահմանում:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԱՅՔԱՐԸ

Հին ժամանակ Ֆինլյանդիայի բանվորները գըտնվում էին կրկնակի ճնշման տակ: Ցարական չինովներինքը յերկրում գորով մոցրել էին պոլիցեյական կարգեր: Ֆիննական ֆաբրիկաներն ու արդյունաբերողները խոցում էին բանվորներին վոգորմելի աշխատավարձով և յերկար աշխատանքային որով: Բանվորները ամուր պաշտպանում էին իրար: 1905 թ. հայտարարվեց ընդհանուր գործադուր: Մի շարք քաղաքներում բանվորները իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: Ռուս ինքնակալությունը ջախջախեց 1905 թվի հեղափոխությունը, և դրա հետ միասին ջախջախվեց նաև ֆինլյանդական հեղափոխությունը:

1917 թվին Ֆինլյանդիայի բանվորները ապստամբություն բարձրացրին և նորեն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: Բանվորական կառավարությունը սահմանեց բանվորների դրությունը բարելավող որենքներ, գյուղացիների համար վերացրեց հողի կապալավարձի (արենդի վարձի) վճարումը և կազմակերպեց կարմիր գվարդիա: Ֆինլյանդիայի ապստամբած բանվորները չունեին լավ դեկավարներ: Կոմունիստական կուսակցություն չկար: Մենչևիկները — սոցիալդեմոկրատները գործում էին անվճռողական: Բուրժուազիան հավաքեց իր ուժերը հյուսիսում, վազաքաղաքում, այնտեղ կազմակերպեց սախտակ գվարդիա և սկսեց արշավել Ֆինլյանդիայի մայրաքաղաքի (Հելսինգֆորս) վրա, ուր գտնվում էր ֆին բանվորների հեղափոխական կառավարությունը:

75 հազար կարմիրգվարդիական-բանվորներ հերոսաբար կռվեցին հարձակվող սախտակ գվարդիայի դեմ:

1918 թ. ապրիլին Գերմանիայի կայսր Վիլհելմը ֆին արդյունաբերողներին ու կալվածատերերին ոգնություն ուղարկեց 20 հազար գերմանական զինվորներ: Կարմիր գվարդիայի ջոկատները չկարողացան դիմադրել թշնամու հարձակմանը ու ջարդվեցին:

ԲՈՒՐՃՈՒՍՋԻՍՅԻ ԱՐՅՈՒՆԱԼԻ ՎՐԵՃԻՆԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1918 թվին ֆինլյանդական հեղափոխությունը ջախջախվելուց հետո, արդյունաբերողների և կալվածատերերի կառավարությունը յերկրում սահմանեց պո-

լիցեյական ուսում: Պոլիցիան և դոնոսչիկները հետե-
վում են ամեն խոսքին, ամեն քայլին: Բայց իշխա-
նությունը իրենց ձեռքում պահելու համար, բավական
չեն չինտիլիկները, պոլիցիան, դատարանները, բանտերը
և լուծերական պատուիրները:

Ուստի և Ֆինլյանդիայի բուրժուազիան կազմա-
կերպել և ֆաշիստական զինված հատուկ շոկատներ
«շուտացկորներ» անունով:

Ֆաշիստները պահվում են կառավարութայն միջոց-
ներով և կալվածատերերի ու գործարանատերերի
նվիրատուություններով: Ֆաշիստական շոկատի յուրա-
քանչյուր անդամ պարտավոր է դրուժինայի կասսա-
յին վճարել վորոշ գումար: Ֆաշիստական շոկատները
կազմակերպված են ըստ ռազմականի: Նրանք բա-
ժանված են դրուժինաների, ստանում են ռեմունդի-
րովկա (հագուստ), ունեն հրացաններ, պուլեմյոտներ,
թնդանոթներ, բրոնեվիկներ, իրենց անդամներին վար-
ժեցնում են ռազմական գործին, սարքում են ման-
յովրներ, հրաձգություններ: Շարունակ զինվորական
ծառայություն են կատարում — հրացանի տակ են
գտնվում 100 հազար մարդ: Ֆաշիստական կազմա-
կերպութայն մեջ ընդունվում են հողագործների,
քաղաքային չինտիլիկների, ոֆիցերների զավակները
և իշխող բուրժուազիայի նոքարները: Ֆաշիստները
պարտավոր են պաշտպանել սեփականությունը, կըռ-
վել գործադուլավոր-բանվորների դեմ, պաշտպանել
տիրող իրավակարգը:

Պառլամենտում ըտրը պատգամավորների մեծ
մասը արդյունաբերողների ու կալվածատերերի կողմն
ե պահում: Բավական մեծ խմբակ են կազմում մեն-
շիկները, վորոնք, ինչպես և ամեն տեղ, բուրժուա-
զիայի կողմն են պահում՝ Ֆինլյանդիայի բանվորների
և գյուղացիների դրությունը արմատապես բարելա-
վելու հարցերը քննելիս:

Նահանգական քաղաքներում նստած են նշանա-
կովի նահանգապետները, իսկ գավառներում — գավա-
ռային կառավարիչները:

1918 թվի ֆինլանդական հեղափոխությունից
հետո ֆին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը
պառակտվեց: Այդ կուսակցութայն մի մասը անցավ
բանվորների ու գյուղացիների կողմը, իրեն հայտա-
բարեց կոմունիստական կուսակցություն, մյուս
մասը — անցավ բուրժուազիայի կողմը:

1924 թվի ամառը կառավարությունը ցրվ սվեց
կոմունիստական կուսակցությունը: Վերջինս անցավ
պողպտ և աշխատում է թագստում, թագնվում պոլի-
ցիայի կետապնդումներից (բռնելիս ձեռքակալում են
կոմունիստներին), ֆիննական ֆաշիստներից:

ՖԻՆԼՅԱՆԴԻԱՆ ՑԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ցարական իշխանութայն որոք Ֆինլյանդիան մըտ-
նում եր Ռուսաստանի կազմի մեջ, բայց ուներ իր
ինքնավարությունը: Ռուս արդյունաբերողներին ու
կապիտալիստներին դա դուր չեր գալիս: Նրանք

լիցեյական ուսում: Պոլիցիան և դոնոսչիկները հետե-
վում են ամեն խոսքին, ամեն քայլին: Բայց իշխա-
նությունը իրենց ձեռքում պահելու համար, բավական
չեն չինովիկները, պոլիցիան, դատարանները, բանտերը
և լուծերական պատուհանները:

Ուստի և Ֆինլանդիայի բուրժուազիան կազմա-
կերպել և ֆաշիստական զինված հատուկ ջոկատներ
«շտուրմկորներ» անունով:

Ֆաշիստները պահվում են կառավարութայն միջոց-
ներով և կալվածատերերի ու գործարանատերերի
նվերատվություններով: Ֆաշիստական ջոկատի յուրա-
քանչյուր անդամ պարտավոր է դրուժինայի կասսա-
յին վճարել վորոշ գումար: Ֆաշիստական ջոկատները
կազմակերպված են ըստ ռազմականի: Նրանք բա-
ժանված են դրուժինաների, ստանում են որմունդի-
րովկա (հագուստ), ունեն հրացաններ, պուլեմյոտներ,
թնդանոթներ, բրոնեվիկներ, իրենց անդամներին վար-
ժեցնում են ռազմական գործին, սարքում են ման-
յովրներ, հրաձգություններ: Շարունակ զինվորական
ծառայություն են կատարում — հրացանի տակ են
գտնվում 100 հազար մարդ: Ֆաշիստական կազմա-
կերպութայն մեջ ընդունվում են հողագործների,
քաղաքային չինովիկների, ոֆիցերների զավակները
և իշխող բուրժուազիայի նոքարները: Ֆաշիստները
պարտավոր են պաշտպանել սեփականությունը, կըռ-
վել գործադուլավոր-բանվորների դեմ, պաշտպանել
տիրող իրավակարգը:

Պառլամենտում բոլոր պատգամավորների մեծ
մասը արդյունաբերողների ու կալվածատերերի կողմն
ե պահում: Բավական մեծ խմբակ են կազմում մեն-
չևիկները, վորոնք, ինչպես և ամեն տեղ, բուրժուա-
զիայի կողմն են պահում: Ֆինլանդիայի բանվորների
և գյուղացիների դրությունը արմատապես բարելա-
վելու հարցերը քննելիս:

Նահանգական քաղաքներում նստած են նշանա-
կովի նահանգապետները, իսկ գավառներում — գավա-
ռային կառավարիչները:

1918 թվի ֆինլանդական հեղափոխությունից
հետո ֆին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը
պառակտվեց: Այդ կուսակցութայն մի մասը անցավ
բանվորների ու գյուղացիների կողմը, իրեն հայտա-
րարեց կոմունիստական կուսակցություն. մյուս
մասը — անցավ բուրժուազիայի կողմը:

1924 թվի ամառը կառավարությունը ցրվի ավեց
կոմունիստական կուսակցությունը: Վերջինս անցավ
պողպոլ և աշխատում է թագստում, թագնվում պոլի-
ցիայի հետապնդումներից (բռնելիս ձեռքակալում են
կոմունիստներին), ֆիննական ֆաշիստներից:

ՖԻՆԼԱՆԴԻԱՆ ՑԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ցարական իշխանութայն որոք Ֆինլանդիան մըռ-
նում էր Ռուսաստանի կազմի մեջ, բայց ունեք իր
ինքնավարությունը: Ռուս արդյունաբերողներին ու
կապիտալիստներին դա դուր չէր գալիս: Նրանք

ուղղում էլին Ֆինլյանդիայում նստեցնել ոռու չինով-
նիկները, յերկրում մացնել ոռու լեզուն և իրենց
ձեռքը գցել Ֆինլյանդիայի հարուստ անտառներն ու
ֆարրիկները, ասպարիզից հեռացնելով ֆին կապի-
տալիստներին:

1905 թվի հեղափոխութեան որերին ցարական մա-
նիֆեստով խոստում արվեց չմիջամտել Ֆինլյանդիայի
ներքին գործերին: Բայց յերբ հեղափոխութունը
ջախճախվեց, ցարական կառավարութունը կրկին վեր-
սկսեց իր արշավանքը Ֆինլյանդիայի դեմ: Կոխվը ֆին
և ոռու կապիտալիստների միջև — ուժեղ հարվածեց
ֆին բանվորին ու գյուղացուն:

Իր քաղաքականութեամբ ցարական կառավարու-
թունը ֆին բանվորներին ու գյուղացիներին զրգռեց
ուռաների դեմ: Ֆին բուրժուազիային դա ձեռնաու-
յիր, նա այդ գործում ոգնեց ոռու ցարին:

Հեղափոխութունից հետո բուրժուազիան շարու-
նակում է իր յերկրի բնակչութունը զրգռել ոռու-
ների դեմ: 1918 թվին Վիրորգ քաղաքում նա կազ-
մակերպեց ոռուների պագրոմ (ջարդ):

ՖԻՆԼՅԱՆԴԻԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Յերբ Հոկտեմբերյան հեղափոխութունից հետո
ընկ. Լենինի մոտ Լենինգրադ յեկավ ֆիննական կա-
ռավարութեան գլուխը, վորպեսզի պարզի հարցը Ֆին-
լյանդիայի մասին, — ընկ. Լենինը իսկույն հրատա-
րակեց ղեկընտ, ըստ վորի Ֆինլյանդիան հայտարար-

վեց անկախ պետութուն: Այդ դեկրետով ընկ. Լենինը
ֆին բանվորին ու գյուղացուն ասաց, վոր խորհրդա-
յին կառավարութունը յերբեք չի վարի հին քաղա-
քականութունը, և վոր Ֆինլյանդիան կարող է ինքը
իր յերկրում սահմանել իր ուզած կարգերը:

Ֆին արգյունաբերողների ու կալվածատերերի
կառավարութունը հեղափոխութունից հետո յերկար
ժամանակ չեր սկսում բանակցութունները խորհր-
դային Ռուսաստանի հետ: Նա կարծում էր, վոր բան-
վորա-գյուղացիական իշխանութունը կկործանվի Դե-
նիկինի ու Կոլչակի կողմից: Բանակցութունները
սկսվեցին միայն 1920 թվին, և կնքվեց դաշնագիր:

Համաձայն այդ դաշնագրի, վորոշվեցին սահման-
ները յերկու պետութունների միջև և նիշվեցին
ուղիներ՝ հաշտ ապրելու համար: Բայց 1921 թ.
Ֆինլյանդիան մեր յերկիրն ուղարկեց բանդաներ:
Ուստի 1922 թվին ստորագրվեց նոր համաձայնու-
թուն, ըստ վորի՝ ֆին կառավարութունը խոստացավ
ոգնութուն չհասցնել խորհրդային Ռուսաստանի վրա
արշավող բանդաների գլխավորներին, իսկ խորհրդա-
յին կառավարութունը հայտնեց, վոր յեթե մի անգամ
ևս բանդաները յերևան, սպա դա կդիտվի վորպես պա-
տերագմի հայտարարութուն՝ Ֆինլյանդիայի կողմից:


ՖԻՆԼՅԱՆԴԻԱՆ ՖԱՇԻՉՄԻ ԿՐՆԿԻ ՏԱԿ

Մի տարի դեռևս չի անցել Ֆինլյանդիայի ֆաշիս-
տական հեղաշրջումից: Այդ ժամանակամիջոցում լա-

պուլասական շարժումը մի կատաղի տեռոր և յերկան հանել և վոչ միայն ֆաշիստական ուղղություն և տվել Ֆինլյանդիայի ներքին քաղաքականությանը, այլ և ազդել և յերկրի արտաքին քաղաքականության վրա: Նրա հակախորհրդային յելութեքը խրախուսվում էին կառավարության դրամական նպաստներով և բուրժուական մամուլի կողմից: Փաշիստական «Ինգերմանլանդական Միությունը», վորի մեջ մտնում են Լենինգրադի շրջանից փախած բոլոր հակահեղափոխական եմիգրանտները, միջազգային իմպերիալիզմի կատարյալ համաձայնությամբ այսոր կատաղի կամպանիա է մղում մեր դեմ: Տենդային սպառազինումը և ռազմական նախապատրաստությունը ընթանում են մեծ թափով: Արվում է ամեն ինչ, վոր լարվի հարաբերությունը ԽՍՀ Միության հետ և վոչ մի միջոցի չի դիմվում, վոր ընդհարումներն ու կոնֆլիկտները տեղի չունենան: Ներկայումս «բռնի աշխատանքի» դեմ կատարվող ազիտացիան և հրապարակ յեկել: Այդ հարցում Ֆինլյանդիան գործում է կատարյալ համերաշխությամբ անգլիական պահպանողականների հետ (Բելլերս և ընկ.): Ձի դադարում նաև յերկու յերկրների մեջ առևտուրը ընդհատելու պայքարը: ԽՍՀ Միության դեմ գրոհելու անմիջական առիթ է համարվում «սովետական դեմպինգը» և կարելիայի ու Ինգերմանլանդական հարցերը: Բացարձակապես պրոպագանդ է մղվում խլելու Խորհրդային կարելիան և Լենինգրադի շրջանը: Պրո-

պագանդ է մղվում ստեղծելու համար «Մեծ Ֆինլյանդիա», վորի սահմանները պիտի հասնեն մինչև Ուրալի լեռները... Լապուասցիների որդան «Հելսինգին Սանտմաթ» լրագիրը գրում է. «Յեթե պատերազմի կրակը փայլի Կարելիայի վրա, այն ժամանակ կգտնվեն հարկավոր քանակությամբ մարդիկ, վորոնք կգծեն Մեծ Ֆինլյանդիայի իսկական սահմանները...» կակի (վորը ջարդել էր Հելսինգֆորսում խորհրդային հյուպատոսի պատուհանները) խուլիզանական արարքը ցայտուն ազացույց է այն բանի, վոր ֆաշիստները պատրաստվում են հակախորհրդային խուճբերից անցնելու հակախորհրդային գործառնություններին:

Ինտերվենտական արամաղրությունը, վորով համակված են բուրժուազիայի լայն շարքերը, վարակել է ֆինլյանդական նաև սոցիալ-դեմոկրատներին, վորոնք յետ չեն մնում Կ ինտերնացիոնալի մեջ մտնող կուսակցություններից, վորոնց մերկացումը տեսանք մենք նորերս Մոսկվայում մենչևիկների դատի ժամանակ: Տնտեսական ծանր ճգնաժամի պայմաններում դասակարգային հակասությունների լարվածությունը ստիպում է բուրժուազիային անցնել ֆաշիստական դիկտատուրայի ուղին: Այդ դիկտատուրայի հիմնական խնդիրը կայանում է նրանում, վոր պայքար մղվի հեղափոխական շարժման դեմ և Ֆինլյանդիան պատրաստվի հակախորհրդային ավանտյուրային մասնակցելու: Խորհրդային Միությունը խորտակիչ հարված է հասցրել այն բոլոր փորձերին, վորոնք ար-



վում են բարդութուններ և կոնֆլիկտներ ստեղծելու համար: Նա աշխատելու յե ստեղծել կանոնավոր փոխհարաբերութուններ Ֆինլանդիայի և իր մեջ:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԶՈՐՔԸ

1) Բարձրագույն ուսումնական վարչոթյունը: Ֆինլանդիայում գործը սկսել է կազմակերպվել հեղափոխութունից հետո: 1925 թվին տեղի ունեցավ գործի և նրա ուսումնական բարձրագույն վարչության վերակառուցումը՝ գործը մեծացնելու և կենտրոնացնելու հակումով: Զորքի գերագույն պետն է հանրապետության նախագահը, վորը գործադրում է իր իշխանութունը պաշտպանության մինիստրներին և գործերին գլխավոր հրամանատարի միջոցով, վորոնց գործադիր մարմիններ հանդիսանում են գլխավոր շտաբը և յերկրի պաշտպանության մինիստրութունը: Նախագահին կից գոյութուն ունի խորհրդակցական մի մարմին — պաշտպանության խորհուրդը, վորը հրավիրում է ուսումնական շինարարության կարևորագույն հարցերը լուծելու համար:

2) Տեղական ուսումնական վարչոթյունները: Տեղական ուսումնական վարչությունները բաղկացած են 15 զինվորական շրջաններից և 4 կոմենդանտական վարչություններից (Հելսինգֆորս, Վիբորգ, Սվեաբորգ և Սանդհամ): Զինվորական վարչությունները իրագործում են զինակոչութունը և զինահավաքը պատերազմի ժամանակ:

3) Զորքի կազմակերպոթյունը յեվ թիվը: Ֆինլանդիայի գործը կազմված է հետևյալ մասերից. հետևակ գործ, հեծելագործ, հրետանի, տեխնիկական գործամասեր, ողային նավատորմից, ծովափնյա գործերը (նավատորմից հետ միասին) և շյուտցկոր: Զորքի ընդհանուր թիվը խաղաղ ժամանակ կազմում է 33.000 մարդ, իսկ պատերազմի ժամանակ գործող բանակը կարելի յե հաշվել 120—150 հազար զինվոր, բացի շյուտցկորից:

4) Զորքի կյանքը յեվ նրա ֆաղափական պատրաստոթյունը: Զորքը ըստ որենքի պիտի քաղաքականությամբ չպարապի, ուստի գորքի մեջ ծառայողները վոչ մի մասնակցութուն չպիտի ունենան յերկրի քաղաքական կյանքի մեջ: Բայց, փաստորեն, իհարկե, այդ չկա, գործը ամբողջովին բուրժուազիայի ձեռքում ծառայում է վորպես զենք ճնշելու և բռնություն կատարելու, իսկ սպանելի և հրամկազմի մեջ տեղի ունի պայքար քաղաքական տարաձայնությունների հողի վրա: Որինակ, նորերս տեղի ունեցած յեգերների կռիվը ընդդեմ ուսու և շվեդ ոֆիցերներին՝ գորքի մեջ իշխանությունը ձեռք բերելու համար, ինչպես նաև գլխավոր շտաբի պետի ձերբակալությունը կրում է յին գուտ քաղաքական բնույթ և տեղի է յին ունենում Ֆինլանդական ամենաաջակողմյան և յետագեմ քաղաքական խմբակցությունների ազդեցության տակ: Սպայական խումբը ներկայացնում է մի առանձին կաստա՝ իրեն հատուկ իրավունքներով և տրադիցիանե-

րով: Իսկ զինվորը բոլորովին իրավագուրկ է և զորքի մեջ գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում բոլորովին կտրված է հասարակութունից: Կարգապահութունը, վոր յեզերները փոխ են առել Գերմանիայից, չափազանց խիստ է և յերբեմն հասնում է անարգանքի՝ զինվորի հասցեյին: Զինվորին վերաբերվում են անխղճ կերպով ծեծը, հայոյանքը, հարբելու համար զրամ կորզելը հրամկազմի կողմից հազվագյուտ յերևույթներ չեն: Պաշտոնական զանցառությունները և կաշառակերությունը առանձնապես զարգացած են Ֆինլյանդական զորքի մեջ: Զինվորի կյանքը չափազանց աննախանձելի յէ: Ռոճիկը մի մարկ է, վոր հավասար է մեր 5 կոպեկին: Իրա համար ել զինվորի և իշխանավորի հարաբերությունները համարյա թշնամական են: Զորքի մեջ դաստիարակութուն և լուսավորական աշխատանքներ չեյին կատարվում մինչև վերջերս, բայց ուռճացող հարբեցողությունը, գողությունները, դասալքությունը և զինվորների մասսայական դժգոհությունը ստիպեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել այդ հարցի վրա: Իաստիարակության և լուսավորական աշխատանքի նպատակն է դարգացնել զինվորի կրոնական զգացմունքը, հայրենասիրությունը և գրագիտությունը: Այդ գործի գլխավոր ղեկավարությունը գտնվում է պատորների և սպաների ձեռքում: Այդ աշխատանքի թույնը ուղղված է ԽՍՀ Միության դեմ, վորը, վորպես թե, Ֆինլյանդիայի ամենակատաղի թշնամին է և պատրաստ է ամեն ըուպե

խախտելու նրա անկախությունը: Այս բոլորից պարզ է, վոր Ֆինլյանդական զորքը կարող է յեւել մեր դեմ միայն այն դեպքում, յեթե նրա յետևում կանգնած կլինեն զրահապատ ավտոմոբիլներով ու զնդացիներով զինված ֆաշիստական ջոկատները — շյուտցիկորները:

5) Շյուտցիկոր (պահպանության կորպուս): Բացի կանոնավոր զորքից, Ֆինլյանդիան ունի բռնության մի դասակարգային որգան ևս, — շյուտցիկոր, վորի նպատակն է նպաստել յերկրի պաշտպանությանը և ապահովել զոյություն ունեցող բուրժուական իրավակարգը: Շյուտցիկորը կամավորական կազմակերպություն է, պահվում է պետության հաշվին և առանձին կապիտալիստների և ընկերությունների նվիրաբերություններով: Նրան անդամագրվել կարող է ամեն մի «բարեհույս» ֆինն, վորի 17 տարին լրացել է, իսկ ավելի փոքրահասակներին ընդունում են ծնողների համաձայնությամբ: Ընդունելու համար պահանջվում է 2 մարդու յերաշխավորություն: Շյուտցիկորը ունի ակտիվ և պասիվ անդամներ: Պասիվ անդամները նրանք են, վորոնք արդեն հասել են 45 տարեկան հասակին և կամ ֆիզիքապես անընդունակ են զենք կրելու: Ծառայության փոխարեն զրանք մտցնում են շյուտցիկորի գանձարանը տարբիճար: Իսկ ակտիվ անդամները պարտավոր են գտնվելու շարքերի մեջ, պարապելու և ծառայելու: Ներկայումս շյուտցիկորի ակտիվ անդամների թիվը 200,000-ից ավելի

յի: Շյուտցկորը գուտ ուղղմական կազմակերպութիւնն է: Նայած անդամների քանակութեանը կազմվում են խմբակներ, դասակներ, վաշտեր, գումարտակներ և զնգեր: Շյուտցկորը ունի զորքի բոլոր տեսակները. հետևակ զորք, հեծելազոր, հրետանի և այլն: Բացի ցամաքային զորքերից, շյուտցկորը ունի իր մոտորավոր նավատորմիդը: Նրա մոտորավոր նավակների թիվը հասնում է 500-ի: Շյուտցկորի վարչութիւնը յերկու տեսակ է. — և՛ ընտրական և նշանակովի: Նրա գերագույն հրամանատարը հանրապետութեան նախագահն է:

ԱՆԳԼԻՍՑԻ ՑՈՒՑՈՒՆՔՈՎ

Ֆինլանդիան առևտրական կապերով կապված է գլխավորապես Անգլիայի հետ, ուր արտահանում է փայտ, յուղ, պանիր և ուրիշ նյութեր: Բացի դրանից, Ֆինլանդիան մեծ պարտք ունի: Պետական պարտք ամեն մի բնակչին ընկնում է 500 ուրբի, իսկ Ֆինլանդիայի պարտքերի տոկոսները վճարելու համար — ամեն մի բնակչին ընկնում է տարեկան 4 ուրբի: Այդ ամենը Ֆինլանդիային հլու գործիք են դարձրել խոշոր կապիտալիստական պետութիւնների ձեռքում: Այդպիսով, Ֆինլանդիան հաճախ ստիպված է կատարել այն, ինչ նրան հրամայում են խոշոր պետութիւնները և առաջին հերթին Անգլիան: Իսկ Անգլիային ձեռնառու չէ, վոր մենք խաղաղ հարաբերութիւնների մեջ գտնվենք մեր հարևանների հետ: Ուստի և Անգլիան աշխատում է Ֆինլանդիային մեր

զեմ գրգռել: Նա ճնշում է գործ զնում Ֆինլանդիայի վրա, վորպեսզի վերջինս կազմակերպի մեր հարևաններից միասնական ֆրոնտ ընդդեմ Խորհրդային Միութեան:

Մենք դա պետք է լավ հիշենք: Քանի Ֆինլանդիայում իշխանութեան գլուխ է գտնվում բուրժուական, մինչ այդ մենք չենք կարող հանգիստ լինել, վոր Ֆինլանդիան մեզ վրա չի հարձակվելու: Իսկ Ֆինլանդիան գտնվում է Լենինգրադից 30 վերստի վրա: Ահա թե ինչու մենք պետք է աշալուրջ հետեվենք այն ամենին, ինչ կատարվում է Ֆինլանդիայում, և ամուր պաշտպանենք մեր սահմանները:

ԵՍՏՈՆԻԱ

Նորհրդային միության արևմտյան սահմաններում մեր հարևանների մեջ Նատոնիան ամենից փոքր պետությունն է: Նատոնիան ունի 1.600.000 բնակիչ և բռնում է 47.548 քառակուսի վերստ տարածություն:

Այդ թվի մեջ են մտնում նաև այն բազմաթիվ կղզիները, վորոնք ընկած են Բալտիկ ծովում և Ֆիննական ծովածոցում: Կղզիների թիվը հասնում է 800-ի: Իրենց մեծությամբ ամենից նշանավորներն են Եզել, Դագո, Վորմս և Մոն կղզիները: Նատոնիան գտնվում է Բալտիկ ծովի մոտ: Ն.Ս.Ն. Միության և Նատոնիայի սահմանը ձգված է 276,6 կիլոմետր յերկարությամբ, վորի համարյա 50%-ը անցնում է Չուդով և Պակովի լճերի ափով: Նատոնիան իր մեծությամբ փոքր է, քան մեր վորևե նահանգը:

Նատոնիան գտնվում է Լենինգրադից 150 վերստի վրա. ուստի և նա մեծ նշանակություն կարող է ունենալ այն դեպքում, յեթե կապիտալիստները պատերազմեն Նորհրդային Միության դեմ: Նատոնիայի վրայով կարող են անցնել ոտարյերկրյա բանակներ և սպանալ Լենինգրադին, ինչպես դա արեց գեներալ

Յուդենիչը 1919 թվին: Մենք լավ ենք հիշում, թե ինչպես Նատոնիայի կառավարությունը և Նատոնիայի բանակը, վոր կազմված է բուրժուական զավակներից և հին ցարական բանակի նախքին ոֆիցերներից, ամեն կերպ ոգնում էին Յուդենիչի հարձակմանը Լենինգրադի վրա: Դա մենք մոռանալ չենք կարող: Դա մեզ ստիպում է ել սվելի շատ հոգալ մեր և Նատոնիայի սահմանի պաշտպանության համար:

Այժմ մենք Նատոնիայի հետ խաղաղ հարաբերություններին մեջ ենք գտնվում: Բայց մենք չե՞ վոր զիտենք, վոր կապիտալիստական պետությունները նորանոր պատերազմներ են պատրաստում մեր դեմ: Յեվ մենք հավատացած չենք, վոր այդ պատերազմում չի մասնակցելու նաև Նատոնիան: Ահա թե ինչու մենք պետք է խաղաղ ժամանակ լավ ուսումնասիրենք մեր հնարավոր թշնամիներին:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Կոնստիտուցիայի համաձայն Նատոնիան համարում է իրեն «դեմոկրատական» հանրապետություն: Որենսդիր իշխանությունը պատկանում է պետական ժողովին (պառլամենտ): Գործադիր մարմին հանդիսանում է «Հանրապետական կառավարությունը», կամ մինիստրների խորհուրդը, վորին զլուխ է կանգնած պետական ալազը, Նատոնիայի արտաքին քաղաքականությունը նրա գոյություն ամբողջ ընթացքում անցել է արևմտյան մեծ պետությունների թելա-

դրութեամբ: Ֆինանսական կողմով գտնվելով ամբողջովին Լոնդոնի բորսայի ձեռքում և լինելով նրան պարտականը վոտից մինչև գլուխ, Մատոնական բուրժուազիան կողմնակից ե անգլիական որիյենտացիային: Մերձբալտյան պետութիւններից կազմված բլոկի մեջ եստոնական կառավարութիւնը ջերմ կողմնակից ե այն մտքին, վոր այդ բլոկի մեջ մտնեն նաե Ֆինլանդիան և Լեհաստանը: Խ.Ս.Ն. Միութեան վերաբերմամբ Մատոնիայի քաղաքականութիւնը չեզոք-թշնամական ե, չնայած այն տնտեսական շահին, վոր նստանում ե մեր տրանզիտից:

ԱՇԵԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ ԵՍՏՈՆԻԱՅՈՒՄ

Մենք արդեն ասացինք, վոր Մատոնիան իրեն անվանում ե ժողովրդական հանրապետութիւն: Բայց Մատոնիայում իշխանութեան գլուխ փաստորեն գտնվում ե բուրժուազիան — կապիտալիստները և կալվածատերերը, ֆաբրիկանտները, գործարանատերերը: Այդ ամբողջ վոհմակը դաժանորեն ե պատժում Մատոնիայի բանվորների, բատրակների ու չքավոր գյուղացիների հեղափոխական շարժումը: Բայց դա չի կարող կասեցնել հեղափոխական շարժման ծավալումը: Մենք գիտենք թե ինչպես տարեց-տարի ուժեղանում ե Մատոնիայի կոմունիստական կուսակցութիւնը, թե ե նա գտնվում ե պողպտլիայում: Բուրժուազիայի իշխանութիւնը միշտ ել գտնվում ե բանվորների ու գյուղացիների ապստամբութիւնների սպառնալիքի տակ:

Մատոնիայի բանվորների ու չքավոր գյուղացիների այդպիսի ապստամբութիւններից մեկը յեղավ 1924 թվին: Բայց կապիտալիստների ու կալվածատերերի կառավարութեանը հաջողվեց դա այն ժամանակ խեղդել:

Վատ ե ապրում բանվորն ու գյուղացին Մատոնիայում: Բնակչութեան գլխավոր պարապմունքն ե գյուղատնտեսութիւնը: Ցարի ժամանակ համարյա ամբողջ հողը պատկանում եր Գերմանիայի կալվածատերերին, վորոնք շատ վաղուց խլել են հողը: Մատոնիայում գյուղացիութիւնը բնակչութեան մեծամասնութիւնն ե կազմում: Մատոնիայի բուրժուական կառավարութիւնը գյուղացիների անբավականութիւնից վախենալով, ստիպված յեղավ հրատարակել որենք՝ հողը բաշխելու մասին: Գերմանիայի կալվածատերերի հողերը խլեցին, բայց և այնպես գյուղացիները հող չստացան: Հողը բաշխվեց Մատոնիայի կալվածատերերի, կուլակների և ոֆիցերների միջև, իսկ գյուղացիները այդպես ել հողագործի մնացին: Այդպես բաժանեց հողը կապիտալիստների ու կալվածատերերի կառավարութիւնը. ուրիշ կերպ չեր ել կարող լինել:

Չքավոր գյուղացիութեան և բատրակների գրութիւնը հուսահատական ե: Աշխատավարձը ցածր ե, քան ցարական ժամանակ եր: Ստիպված են աշխատել որեկան 18 ժամ: Տեղ չկա վոր բողոքեն, վորովհետև ամեն տեղ նստած են բուրժուազիայի պաշապանները: Ամեն մի անբավականութիւն համարում են «բոյլչևիկյան» բուհտ: Յեւ վրա համար գնդակահարում են ու բանտ նստեցնում:

Եստոնիայի հողը քիչ է բերրի: Դաշտերը լավ են պարարտացվում և մշակվում: Լավ բերք է ստացվում: Կիրառվում է բազմադաշտյան սխտեմ և արհեստական պարարտացում: Հացաբույսերից ամենից շատ ցանում են հաճար, վարսակ, գարի, ցորեն: Ծատ տեղ է հատկացրած կարտոֆիլի համար: Յեվ սակայն Եստոնիային իր հացը չի բավականացնում:

Եստոնիայում կան շատ անտառներ: Յերկրի մի հինգերորդ մասը ծածկված է անտառներով: Կան բազմաթիվ փայտաօդոցարաններ և թղթի ֆաբրիկներ: Արտասահման է ուղարկվում փայտ և թուղթ, և դրանից շատ են շահվում Եստոնիայի ֆաբրիկաներն ու առևտրականները:

Եստոնիայում մեծ նշանակություն ունի ձկնորսությունը՝ Բալտիկ ծովում: Արտասահման են ուղարկում նույնպես և ձկնի կոնսերվներ:

Եստոնիայում շատ քիչ կան ֆաբրիկներ ու գործարաններ: Կան մի քանի մեծ տեկստիլ ֆաբրիկներ, բայց դրանք ել այժմ քիչ են արտադրում մանուֆակտուրա: Եստոնիայի համար այդ ֆաբրիկները չափազանց մեծ են: Դրանք ցարի ժամանակ կառուցել են եստոնական կապիտալիստները նրա համար, վորպեսզի մանուֆակտուրան վաճառեն Ռուսաստանի շուկաներում: Այժմ ֆաբրիկների մեծ մասը փակված են: Ծայր է տալիս գործադրկությունը: Բանվորների աշխատա-

վարձը պակասում է, իսկ աշխատանքային ուրը ավելանում: Բանվորներին նեղում են: Պաշտպանություն վոչ մի տեղ գտնել չեն կարող: Կառավարությունը կազմված է նույն գործարանատերերից ու ֆաբրիկանտներից և պաշտպանում է իհարկե բուրժուազիայի յեկամուտները: Եստոնիայի արդյունաբերությունը չի կարող ավելանալ: Եստոնիան չունի սեփական ածուխ, երկաթ և նավթ: Առանց դրան — չի կարելի գործարաններ ու ֆաբրիկներ կառուցել: Եստոնիան վոչ միայն արտասահման ապրանք չի ծախում, այլ ինքը ստիպված է գնել արտասահմանում: Հացը նույնպես գնում են արտասահմանում: Դրա համար հարկավոր է փող-վոսկի: Փող է հարկավոր՝ նաև պետության պաշտպանության համար, բանակի, չինովնիկության, պոլիցիայի ու բանտերի պահպանության համար, վորպեսզի եստոնական կապիտալիստներն ու կալվածատերերը իշխանությունը իրենց ձեռքում պահեն ու նեղեն աշխատավոր ժողովրդին:

ՌԻՄ ԶԱՇՎԻՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԵՍՏՈՆԻԱՆ

Իսկ ի՞նչ միջոցներով է եստոնական բուրժուազիան ձեռք բերում իրեն հարկավոր գումարները: Փողերը պտացվում են մեծ հարկերից: Հարկերը հետզհետե ավելացվում են և վատթարացնում Եստոնիայի բանվորի ու գյուղացու առանց այն էլ ծանր դրությունը: Բուրժուազիան ոգտագործում է ամեն մի դեպք՝ հարկերը ավելացնելու համար: Բանվորների և գյու-

դացիների անբավականութեան դեմ կռուելու համար Յատոնիայի բուրժուազիան ավելացնում է վուստիկաների թիվը: Բուրժուազիան լուրեր է բաց թողնում բոյլշեիկյան վտանգի մասին և դրանից ոգտվելով, անդադար ավելացնում է իր բանակը: Այդ մեծ ծախսերի ամբողջ ծանրութունը բուրժուազիան զցում է աշխատավորութեան վրա, ավելացնելով հարկերը:

Հարկերի ծանրութունը ավելանում է նաև այն պատճառով, վոր Յատոնիայի կառավարութունը պարտքեր է վճարում ոտարյեբկրյա կապիտալիստներին: Յատոնիային իր փողը չի բավականացնում: Ծախսերը շատ մեծ են: Նա ստիպված է շատ մեծ պարտքեր անել ուրիշ բուրժուական յեբկրներում: Յեւ կապիտալիստները սիրով համաձայնվել են Յատոնիային փող տալ: Իսկ հիմա Յատոնիան դրա համար ստիպված է մեծ տոկոսներ վճարել. բուրժուազիան իհարկէ իր գրպանից չի վճարում, այլ ավելի ևս մեծացնում է հարկերը:

Բացի հարկերից, Յատոնիայի կառավարութունը յեկամուտներ է ստանում՝ հարկերի յենթարկելով այն ապրանքները, վոր Խորհրդային Միութիւնը ուրիշ պետութիւններից ստանում է Յատոնիայի վրայով: Խորհրդային Միութիւնը առևտուր է անում արտասահմանյան պետութիւնների հետ: Արտասահմանից ապրանքներ ստանալու համար, բացի Լենինգրադի մեր նավահանգստից, մենք կարիք ունենք և ուրիշ նավահանգստների (Բալտիկ ծովի) վոր պատկանում են Յատոնիային:

Յատոնիայի մայրաքաղաք Ռեվելը լավ հարմար նավահանգիստ է, և մեր շատ ապրանքներ ստացվում են այդտեղով. ապրանքը նավերից ցած բերելու և եստոնական յեբկաթուղով բերելու համար Յատոնիայի կառավարութիւնը շատ է ոգտվում՝ մեզնից մեծ վճարներ վերցնելով: Այսպիսով, Յատոնիայի պետութիւնը մեծ յեկամուտներ ունի նրանից, վոր մենք մեր ապրանքները ստանում ենք Յատոնիայի վրայով:

Կարելի յե համարձակ ասել, վոր Յատոնիան զըլխավորապես այդ յեկամտի շնորհիվ է վոր գոյութիւն ունի: Ահա այսպես, կապիտալիստների ու կալվածատերերի իշխանութիւնը Յատոնիայում պահպանվում է բանվորներին ու գյուղացիներին թալանելու հաշիւին, նրանց կյանքի ու աշխատանքի պայմանները վատթարացնելու հաշիւին և այն հանգամանքի շնորհիվ, վոր միջնորդի դեր է կատարում մեր առևտրական գործերում:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

1) Ռեզոնական բարձրագույն վարչարարութիւնը: Խաղաղ ժամանակ յեբկրի բոլոր զինված ուժերը գտնւվում են ռազմական մենիստրութեան իշխանութեան ներքո: Պատերազմ հայտարարելու և խաղաղութիւն կնքելու իրավունքը պատկանում է կառավարութեանը, յերբ պետական ժողովը նախապես վորոշումն է կայացնում այդ մասին: Բացի դրանից, զլխավոր շտաբի պետի միջոցով, ռազմական մինիստրին են յենթար-

կվում ցամաքային զորքերի պետերը, ամենատեսակ զորամասերի տեսուչները և ռազմական դպրոցների տեսուչը: Պատերազմի ժամանակ կստեղծվի գլխավոր հրամանատարի ինստիտուտ, վորը կունենա իր գլխավոր շտաբը և դաշտային վարչությունը:

2) Տեղակաև ռազմական վարչությունները: Ռազմավարչական իմաստով Եստոնիան բաժանված է 11 գավառի (գինվորագրության վայրեր), վորոնց գլուխ են կանգնած գավառական ռազմական պետերը:

3) Զորի կազմակերպչությունը յե՛վ թիվը: Եստոնական զորքը բաղկացած է հետևյալ մասերից. հետևակ զորք, հեծելազոր, հրետանի, հատուկ զորքեր և մասնագիտական զորամասեր: Խաղաղ ժամանակ զորքի ընդհանուր թիվը է 20,000 մարդ, իսկ պատերազմի ժամանակ այդ թիվը կարող է բարձրանալ 90,000-ի (չհաշված սպառազինված գաղտնի ֆաշիստական կազմակերպության ուժերը):

4) Զինված զաղտնի ուժերը: Զինված գաղտնի ուժերը միացած են «Պաշտպանության Լիգայի» մեջ, վորը տարածված է ամբողջ յերկրում և բոլոր քաղաքներում և ավաններում: «Պաշտպանության Լիգայի» կազմակերպությունը, վոր ունի նաև արտիլերիա, գնդացիներ, զուտ ռազմական բնույթ ունի և նրա բոլոր անդամները զինված են հրացաններով: Կազմակերպության գլուխ է անցած «Պաշտպանության Լիգայի» պետը, վորը յենթարկվում է անմիջապես զինվորական մինիստրին: «Պաշտպանության Լիգան» դրա-

մական միջոցներ ստանում է պետական բյուջեյից, իսկ զենք ստանում է ռազմական գերատեսչությունից: Կազմակերպությունը բաղկացած է բացառապես քաղաքի բուրժուազիայից և ունևոր գյուղացիներից: «Պաշտպանության Լիգայի» անդամների ընդհանուր թիվը անցյալ տարի հասնում էր 30.000-ի, վորոնք բաժանված են 13 գնդերի (մալեվա): Ամեն մի գունդը ընդգրկում է մի գավառ կամ վորևե խոշոր քաղաք և նույնպես բաժանվում է գումարտակների (մալեկոնդ): «Պաշտպանության Լիգայի» ջոկատների ռազմական նախապատրաստությունը վոչնչով պակաս չէ կանոնավոր զորքի նախապատրաստությունից:

ԲՈՒՐԺՈՒՍՁԻԱՆ ՀԵՆՎՈՒՄ Ե ՊՈԼԻՅԻԱՅԻ ՅԵՎ ԲԱՆԱԿԻ ՎՐԱ

Այսպես են տիրացած կապիտալիստները Եստոնիայում, լցնելով իրենց զբաղանները, իսկ աշխատավոր ժողովուրդը տանջվում է հարկերի ու ոտարյերկրյա մեծ պարտքերի ծանրությունից: Աշխատավորության միջև անբավականությունը մեծանում է: Եստոնիայի կապիտալիստներն ու կալվածատերերը դա լավ են հասկանում, և դա նրանց վախեցնում է: Նրանք վող չեն խնայում պոլիցիան ուժեղացնելու և մեծ բանակ պահելու համար: Շտիկների ու ժանդարմների պահպանության տակ Եստոնիայի բուրժույը իրեն հանդիստ է դգում:

Իր բոլոր պարտքերի համարյա մի յերրորդ մասը Եստոնիայի բուրժուական կառավորությունը ծախ-

սում ե բանակի պահպանութեան վրա: Եստոնիայի ամեն մի 60 բնակչին ընկնում ե 1 զինվոր, իսկ Խորհրդային Միութեան ամեն մի 300 բնակչին ընկնում ե միայն մեկ կարմիր բանակային: Մենք ցանկացանք ել ավելի կրճատել մեր բանակը: Մենք մեր հարևաններին առաջարկեցինք միասին կրճատել բոլոր բանակները: Նրանք հրաժարվեցին: Իրա փոխարեն մենք տեսնում ենք, վոր մեր հարևանների բանակները տարեց-տարի ավելի ու ավելի յեն մեծանում: Այսպես, Եստոնիայի բանակը 1923 թվին ուներ 14,000 մարդ, իսկ այժմ ունի 20,000 մարդ:

Եստոնիայի նախատորմիղը մեծ նշանակութեան չունի, քանի վոր նա կազմված ե մի քանի զինված մանր նավերից:

Եստոնական բանակը կազմված ե նույնպես, ինչպէս և ուրիշ կապիտալիստական պետութեաններում: Այնտեղ աշխատում են գյուղացուն մշակել, վոր նա հլու-հնազանդ լինի բուրժուային: Զինվորներին արգելված ե ժողովներ հաճախելը և լրագիր կարդալը: Ոֆիցերները ընտրվում են Եստոնական հարուստներից, կուլակներից ու կալվածատերերից: Ոֆիցերների վերաբերմունքը դեպի չքավորները շատ խիստ ե և կոպիտ: Մի հասարակ զանցառութեան համար զինվորներին սաստիկ պատժում են:

Եստոնիայի կառավարութեանը այնքան ել շատ չի վստահում իր զինվորներին — սողաատի շինել հագած բանվորներին ու գյուղացիներին: Ուստի և, բացի

մշտական բանակից, Եստոնիայի բուրժուական զանազան անունների տակ պահում ե հատուկ շոկատներ՝ հարուստների, կուլակների և կալվածատերերի զավակներից: Այդ շոկատները վարժվում են ուղիղ մական գործի համար: Նրանց կցված են հատուկ ոֆիցերներ: Այն դեպքում, յեթե Խորհրդային Միութեանը Եստոնիայի հետ պատերազմի բռնվի, մենք ստիպված ենք գործ ունենալու բուրժուական զավակներից կազմված այդ շոկատների հետ:

ԵՍՏՈՆԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԵՍՀՄ

Եստոնիան իր առևտրական գործում և շահույթների իմաստով կախում ունի ԽՍՀՄ-յունից: Իսկ նրան ստիպում ե առայժմ խաղաղ հարաբերութեաններին մեջ լինել Խորհրդային Միութեան հետ: Եստոնիայի ժողովրդական տնտեսութեանը ել ավելի շատ կընկներ, յեթե նա Խորհրդային Միութեան հետ առևտրական գործ չունենար: Իսկ լավ ե հասկանում Եստոնիայի բուրժուական, նազիստ, վոր ինքը մեծ վնաս կկրի, յեթե խզի իր առևտրական կապերը ԽՍՀՄ-յան հետ: Եստոնիայի բուրժուական վախենում ե, վոր այդ գործում կարող ե իր ունեցած մեծ ոգուտները կորցնել:

Բայց Եստոնիայի կապիտալիստները և կալվածատերերը ավելի ևս վախենում են մեր Միութեան հարևանութեանից: Եստոնիայի բուրժուական վախենում ե, վոր Եստոնական բանվորն ու գյուղացին

կարող են հետևել ուսու բանվորների ու գյուղացիների օրինակին: Դա թույլ չտալու համար, Եստոնական բուրժուազիան լուրեր է տարածում, թե Խորհրդային Միությունը պատրաստվում է հարձակվել Եստոնիայի վրա և զրկել նրան անկախությունից, և վոր Խորհրդային Միությունը ուզում է ճորտացնել Եստոնիան: Այդ լուրերով նրանք ցանկանում են արդարացնել մեծ բանակ պահելը: Իհարկե, այդ ամենը վայրահաջություններ են:

Խորհրդային Միությունը խաղաղ քաղաքականություն է վարում. Խորհրդային Հանրապետությունների Միությունը բոլոր ժողովրդների հետ էլ ուզում է խաղաղ ապրել: Խորհրդային Միությունը այդ մասին միշտ էլ հայտնել է: Միայն Խորհրդային Իշխանությունն է, վոր ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին ազատություն տվեց: Եստոնիայի շահերը և հետագա զարգացումը ամուր կապված են Խորհրդային Միության զարգացման հետ: Եստոնիայի ժողովրդական տնտեսությունը կզարգանա այն դեպքում, յեթե խաղաղ ծավալվի առևտուրը յերկու պետությունների միջև: Առանձին, Խորհրդային Միության հետ կապեր չունենալով, Եստոնիան գոյություն ունենալ չի կարող: Ուստի և Խորհրդային Միության հետ խաղաղ հարաբերությունների մեջ գտնվելը — անհրաժեշտություն է Եստոնիայի ժողովրդի բարեկեցության համար: Դա շատ լավ է հասկանում Եստոնիայի բուրժուազիան ևս: Բայց Եստոնիայի բանվորների, գյու-

ղացիների ապստամբելու վախից ստիպված, Եստոնիայի բուրժուական կառավրությունը վոչ թե ամբացնում է խաղաղ հարաբերությունները մեր նկատմամբ, այլ մեր դեմ վարում է թշնամական քաղաքականություն

ԱՆԳԼԻԱՆ ԵՍՏՈՆԻԱՅԻՆ ԳՐԳՌՈՒՄ Ե ՄԵՐ ԴԵՄ

Թշնամական վերաբերմունքը դեպի Խորհրդային Միությունը ունի նաև այլ պատճառ: Եստոնիայի բուրժուական կառավարությունը կախում ունի արտասահմանյան կապիտալիստներից: Եստոնիայի կառավարությունը նրանցից մեծ պարտքեր է արել: Մեծ բանակի, պոլիցիական վոնմակի, բանտերի ու դատարանների (վորոնք խիստ պատժում են բանվորներին ու գյուղացիներին) պահպանության համար նույնպես հարկավոր են մեծ գումարներ: Եստոնիայի կալվածատերերին, կապիտալիստներին հարկավոր է փող, վոր պատերազմեն ԽՍՀՄ-յան դեմ: Իզուր տեղը վոչ վոք փող չի տալիս: Փողի դիմաց Եստոնիան պետք է վարձահատույց լինե իր անկախությամբ և իր բարերարների ձեռքում հլու կամակատար դառնա: Եստոնիայի կառավարությունը ամենից շատ պարտ է Անգլիային: Դրա դիմաց Անգլիան պահանջում է, վոր Եստոնիան թշնամական քաղաքականություն վարի Խորհրդային Հանրապետությունների Միության դեմ: Ամեն մի բանվորին ու գյուղացուն հայտնի յե Անգլիայի ատելությունը դեպի ԽՍՀՄ: Անգլիան ներ-

կայումս թշնամիներ ե հավաքում Սորհրդային Միութեան դեմ:

Արտասահմանյան կապիտալիստները այդ գործի համար փող չեն խնայում: Ոտարյերկրյա կապիտալիստները փող են տալիս վոչ միայն Եստոնիայի կառավարութեանը, այլ և ուրիշ պետութեաններին (վորոնք սահմանակից են Սորհրդային Միութեանը), վորպեսզի ստեղծեն միասնական Ֆրոնտ ընդդէմ Սորհրդային Հանրապետութեանների Միութեանը:

Եստոնիայի և մեր ուրիշ հարևանների շտիկներով Անգլիան ցանկանում ե կռիվ մղել Սորհրդային իշխանութեան դեմ: Բայց դա այս անգամ ել նրան չի հաջողվի. չի հաջողվի այն պատճառով, վոր մենք այժմ բավականաչափ ուժեղ ենք և յետ կմղենք այդ վոհմակի հարձակումը, չի հաջողվի այն պատճառով, վոր մեր հարևանների բանվորներն ու գյուղացիները մեր կողմն են:

Դա հասկանում ե և եստոնական բուրժուազիան. ուստի և նա վարանում ե. նա չի կարողանում վորոշում կայացնել — վոչ պատերազմել և վոչ ել ամրացնել խաղաղ հարաբերութեանները մեզ հետ:

Մենք Եստոնիային առաջարկեցինք յերաշխաւորական դաշնագիր կնքել մեզ հետ, այսինքն մենք միմյանց տալիս ենք յերաշխաւորութեան, խոստում՝ միմյանց վրա չհարձակելու: Եստոնիան առայժմ հրաժարվում ե. Թերևս նա մեզ հետ այդպիսի դաշնագիր կկնքեր, բայց Անգլիան այդ նրան թույլ չի տալիս:

Այսպիսով մենք հավատացած չենք, վոր Եստոնիան չի պատրաստվում պատերազմի մեր դեմ:

Մինչև այն ժամանակ, քանի դեռ Եստոնիայում իշխանութեան գլուխ ե գտնվում բուրժուազիան, Սորհրդային Միութեանը չի կարող հանդիստ լինել: Եստոնական բուրժուազիան շատ հեշտութեամբ կարող ե վաճառել Եստոնիայի շահերը՝ ի հաճույս Անգլիայի, և ուրիշ բուրժուական պետութեանների հետ միասին մեզ վրա հարձակվել: Դա մենք պետք ե յերբեք չմոռանանք: Մենք պետք ե միշտ ել պատրաստ լինենք թշնամուն հանդիպելու և դիմադրելու: Ել ավելի ամրացնենք և ուժեղացնենք կարմիր բանակը: Դա կզրկի մեր թշնամիներին ախորժակից՝ մեր յերկրի սահմաններին մոտենալու:

ԼԱՍՎԻԱ

Լատվիան — արևմտյան մեր հարևաններից մեկն է, նա կազմվել է նախքին ցարական հետևյալ նահանգներից — Կուրլյանդիայի, Լիֆլյանդիայի և Վիտեբսկ նահանգի յերեք գավառներից՝ Դվինի, Ռեժիցկու և Լուցինի: Լատվիայի սահմանները ձգվում են մեր Վիտեբսկի և Պսկովի նահանգների մոտ: Լատվիան բռնում է 65,791 քառ. կիլոմետր, այսինքն այնքան, վորքան մեր միայն Վորոնեժի նահանգն է, իսկ բնակչություն ամբողջ Լատվիայում ավելի քիչ է, քան միայն Մոսկվայում, ընդամենը — մոտ յերկու միլիոն:

Լատվիայի բնակչությունը գլխավորապես գյուղացիներ են: Ամեն մի 100 բնակչից — 80-ը գյուղացիներ են: Լատվիայի բնակչությունը պարապում է գլխավորապես հողագործությունից և անասնաբուծությունից:

Մինչև հեղափոխությունը Լատվիան գտնվում էր ցարական Ռուսաստանի լծի տակ: Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո լատիշ ժողովուրդը կարողացավ կազմել իր սեփական պետությունը: Բայց դրան խանգարում էին գերմանացիները, վո-

րոնք այն ժամանակ տիրացած էին Լատվիային: Գերմանիայում կատարված հեղափոխությունից հետո, 1918 թվին, գերմանացիները Լատվիայից հեռացան: Յեվ այն ժամանակ Լատվիայում կազմվեց ինքնուրույն պետություն: 1918 թվի վերջում Լատվիայում կար խորհրդային բանվորա-գյուղացիական իշխանություն: Խորհրդային իշխանությունը Լատվիայում գոյություն ունեցավ մինչև 1919 թ. մայիսը: Լատիշ բուրժուազիան, ոտարյերկրյա կապիտալիստների ոգնությունից, կարողացավ իշխանությունը իր ձեռքը գցել: Յեվ հենց այն ժամանակ էլ, ոտարյերկրյա բուրժուազիայի ցուցմունքով, Լատվիան սկսեց պատերազմել Խորհրդային Ռուսաստանի դեմ: Միայն 1920 թվին Լատվիան մեզ հետ հաշտություն կնքեց:

Այժմ Լատվիայում իշխանության գլուխ է կանգնած բուրժուազիան — ֆաբրիկանաները և կալվածատերերը: Լատվիայում բանվորներն ու գյուղացիները այժմ ապրում են այնպես, ինչպես մեզ մոտ ապրում էին ցարական ինքնակալության ժամանակ:

Լատվիայում ամենաբազմամարդ դատակարգը գյուղացիությունն է: Բայց Լատվիայի գյուղացիների միջև կան շատ կուլակներ և ունևորներ, վորոնք իրենց անտեսությունը վարում են բատրակների ոգնությունից: Լատվիայում այդպիսի կուլակներին անվանում են «գորշ բարոններ» («սերիյ բարոն»), իսկ Գերմանիայի խոշոր կալվածատերերին անվանում են «կապույտ բարոններ» («սինիյ բարոն»): Մանր գյուղացիները, միջակ-

ները և չքավորները այնտեղ կազմում են 46 տոկոսը: Գյուղատնտեսական բանվորները, կամ բատրակները լատիշ գյուղացիութայն մեջ կազմում են 42 տոկոսը:

Այդպիսով, լատիշ գյուղացիութայն համարյա մեկ յերրորդը ապրում է բատրակների ու չքավորների հաշվին: Այդ կուլակները, հասկանալի չե, կողմնակից են բուրժուական իրավակարգի և թշնամաբար են տրամադրված դեպի Խորհրդային իշխանությունը: Այսպիսով, Լատվիայի գյուղացիութայն 70 տոկոսը գտնվում են հարուստ մուժիկի լծի տակ, վորը նրանցից քամում է վերջին հյուսիսը: Նրանք, իհարկե, բուրժուական իշխանութայն դեմ են, ուստի և նրանք — մեր բարեկամներն են:

Լատվիայի բանվոր դասակարգը թվով մեծ չէ: Վերջին տարիներս բանվորների թիվը աճում է: 1921 թվին Լատվիայում կային 28.643 արդյունաբերական բանվորներ, 1925 թվին — արդեն 52.000: Բայց և այնպես բանվորների թիվը այժմ ավելի քիչ է, քան նախապատերազմյան շրջանում, քանի վոր, որինակ, 1913 թվին Լատվիայում կային ավելի քան 100.000 բանվորներ:

Լատվիայում կան մի շարք մանր կուսակցություններ: Նրանց մեծ մասը խոշոր ու մանր բուրժուազիայի զանազան գրուպպաներից են, կալվածատերերից և ունևոր գյուղացիներից: Լատվիայի սեյմում (պառլամենտում) տեղերի մեծ մասը պատկանում է սոցիալ-դեմոկրատներին — մենշևիկներին և «դեմոկրա-

տական կենտրոնին», այսինքն կուլակներին և առհասարակ մանր բուրժուազիայի ներկայացուցիչներին:

Լատվիայում միշտ ել խիստ հալածանքի յեն յենթարկվել և այժմ ել յենթարկվում են հեղափոխական բանվորներն ու բատրակները: Ուստի Լատվիայի կոմունիստական կուսակցությունը և պրոֆմիությունների մեջ միացած բանվորները չեն կարողանում մասնակցել սեյմի ընտրություններին, վորովհետև բոլոր բանվոր թեկնածուներին խիստ հետապնդում են:

Լատվիայի անտեսությունը այժմ մեծ կրիզիս է ապրում, այսինքն՝ ժողովրդական անտեսությունը գտնվում է ծանր գրության մեջ:

Այդ մյ ին «Բալս» բուրժուական լատիշ թերթը հետևյալն էր գրում.

«Մենք մեկ տարվա ընթացքում արտասահման ենք ուղարկել զանազան ապրանքներ՝ 180 միլիոն լատի (մոտ 90 միլիոն ռուբլու), իսկ արտասահմանից ստացել ենք 290 միլիոն լատի (մոտ 145 միլիոն ռուբլու): Նշանակում է, մեր արտաքին առևտուրը դեֆիցիտ (վնաս) է տալիս 110 միլիոն լատի (մոտ 55 միլիոն ռուբլու): Իսկ ինչով մենք կարող ենք ծածկել մեր այդ պարտքերը»: Ահա այդ հարցին Լատվիայի բուրժուազիան վոչ մի պատասխան տալ չի կարողանում:

Լատվիայի անտեսությունը տարեց-տարի վատթարանում է, պարտքերը մեծանում են: Իսկ թե ինչպես այդ պարտքերը վճարել, — լատիշ բուրժուազիան այսօր տարվա ընթացքում դրա միջոցը չի գտել,

և չի գտնի, քանի վոր Լատվիայի ամբողջ տնտեսութ-
յունը կապված է Խորհրդային Միության հետ:
Լատվիայի պետութունը կարող է զարգանալ միայն
այն ժամանակ, յետև նա լավ հարաբերությունների
մեջ գտնվի Խորհրդային Միության հետ: Լատվիան
շահագրգռված է նրանով, վորպեսզի ուրիշ յերկրնե-
րից ԽՍՀՄ ուղարկվող ապրանքները ստացվեն Լատ-
վիայի միջոցով: Լատվիան շահագրգռված է իր ապ-
րանքները արտահանել ԽՍՀՄ: Բայց դրա համար
պահանջվում է, վոր Լատվիան պահպանի իր լավ
կապերը մեր յերկրի հետ:

Բայց Անգլիայի — ԽՍՀՄ կատարի թշնամու շահե-
րին ձեռնտու չէ, վոր Լատվիան մեզ հետ լավ հարա-
բերությունների մեջ գտնվի: Անգլիան ձգնում է
միացնել մեր բոլոր հարևաններին (Արևմուտքում) և
կազմել միասնական ֆրոնտ մեր դեմ: Դրա համար
եւ Անգլիան մեր դեմ է գրգռում Լատվիային: Նա
Լատվիային տալիս է փոխառություն, զենք, Այդպիսով
Անգլիան իր բոլի մեջ է պահում Լատվիային: Յեւ
հետո, Լատվիայի բուրժուազիան ևս, իհարկե, մեր թըշ-
նամին է և ոտարյերկրյա բուրժուազիայի ոգնությամբ,
հարմար առիթին, մեզ կարող է խփել: Ամուր կապ
մեր և Լատվիայի մեջ — առայժմ չկա, ուստի և յեր-
կրի տնտեսությունը ավելի ու ավելի յե քայքայվում:

Մինչև 1914 թվի պատերազմը Լատվիայում բան-
վորների թիվը յերկու անգամ ավելի յեր, քան այժմ:
Պատերազմի ժամանակ շատ ֆաբրիկներ ու գործա-

րաններ Լատվիայից դուրս բերվեցին և ուղարկվեցին
ցարական Ռուսաստանի ուրիշ նահանգներ: Շատ լա-
տիշ բանվորներ հոժարակամ մտան Կարմիր բանակը
և մեզ հետ միասին կռվեցին բոլոր ֆրոնտներում
ընդդեմ բելոգվարդեյշինայի: Բանվորների թիվը Լատ-
վիայում այդպիսով խիստ պակասեց: Այդ հանգա-
մանը թուլացրեց Լատվիայի բանվոր դասակարգին:
Բուրժուազիան սկսեց իրեն ավելի հանգիստ դգալ:

Բայց յերկրում մնացին բողոմաթիվ չքավորներ,
գյուղացիներ ու բատրակներ, վորոնք թշնամաբար
եյին սրամազրված դեպի բուրժուազիան և Լատվիայի
բուրժուական կառավարությունը: Բուրժուազիան ևս
իր հերթին նրանց մեջ տեսնում էր իր յերդվյալ թըշ-
նամուն: Յեւ, վորպեսզի հողագուրկ գյուղացուն իր
կողմը քաշի, Լատվիայի բուրժուազիան, սոցիալ-դե-
մոկրատների հետ միասին, զիմեց խորամանկության:
Կառավարությունը հայտարարեց, թե վորոշված է
բոլոր բատրակներին հողեր տալ՝ ի հաշիվ նախկին
խոշոր հողատերերի: Կառավարությունը հայտարարեց,
թե կոգնի չքավորներին շինարարական նյութերով,
ինվենտարով ու փողով: Բայց դա յերբ սկսվեց կյան-
քում կիրառվել, ապա լավագույն հողամասերը մնացին
կալվածատերերի, չինովնիկների և նրանց ձեռքում,
ովքեր մոտիկ եյին կանգնած կառավարությանը: Հող
ստացան այն չքավորները, վորոնք ունեյին իրենց
ինվենտարը (չենքեր, գործիքներ և այլն) կամ վորոնց
համար յերաշխավորում եյին «գորշ բարոնները» (կու-

լակները), թե նրանք իրենց ուժերով ու միջոցով շենքեր կշինեն: Բատրակներին մեծ մասը, այդպիսով, մնաց հողագուրկ:

Լատվիայի չքավոր-գյուղացին սկսեց հասկանալ, վոր ինքը խորամանկության գոհ է գնացել և ընկել է «գորշ բարոններին» թակարդը ու ել ավելի մեծ չափով կախում ունի նրանցից ու գտնվում է նրանց լծի ասի: Բատրակներն ու չքավորները սկսեցին ծախծխել իրենց գույքը և փախչել այդ հողամասից, ավելի լավ համարեցին նորեն բատրակ վարձվել: Այժմ Լատվիայում կրկին կա մոտ 200 հազար հողագուրկ գյուղացի: Հողագուրկներին թիվը տարեց-տարի մեծանում է: Լատվիայի բատրակը բուրժուազիայի խաբեյությունը, այդ ծագրը չի մոռանա:

Բայց լավ չե նաև միջակ գյուղացու դրությունը Լատվիայում: Ահա ինչ է գրում «Յառնակաս Զինյաս» լատիշ լրագիրը՝ «Գյուղի ծանր դրությունը» կրող հողվածում: Մենք այդտեղ կարդում ենք — «Յեթե այս ձմեռ գլուխ հանենք, ապա ևս մի յերկու տարի կարող ենք գոյություն ունենալ»: Այնուհետև լրագիրը հայտնում է, վոր Լատվիայում տեղ-տեղ լավ բերք է յեղել գարու և կարտոֆիլի: «Բայց, — գրում է լրագիրը, — ինչի՞ է պեսք գարու և կարտոֆիլի այդ բերքը, յերբ ներկա գներով և նույնիսկ ամբողջ բերքը ծախսելով չի կարելի վճարել պարտքի միայն տոկոսները, ել չենք ասում հարկերի մասին, և այլ պարտքերի ու գույքերի մասին: Գյուղացու համար պարզ է,

վոր մուրհակների շղթայից նրան չի փրկի վոչ կտավատը, վոչ գարին, վոչ կարտոֆիլը: Իսկ գարին ու կարտոֆիլը մինչև այժմ համարվում էին գյուղացիության փողային ապրանք»: Այդպիսի տողեր ստիպված է յեղել գրելու բուրժուական լրագիրը:

Միջակ գյուղացու դրությունը Լատվիայում ավելի ևս վատ է: Լատվիայում քանի գոյություն կունենան ներկա իշխանությունը, լատիշ գյուղացին պարտքերի ծանրությունից, — կարիքներից չի կարող ազատագրվել:

Լատվիայի բանվոր դասակարգի դրությունը շատ բանով տարբերվում է լատիշ գյուղացիության աշխատավոր մասսաների դրությունից: Ով գործ ունի, նա դեռ մի կերպ կարողանում է ապրել: Բանվորը Լատվիայում ամսեկան աշխատում է միջին հաշվով, մեր փողերով, 25—30 ուրբլի: Բայց գները մինչպատերազմյան գներից չափազանց բարձր են: Ուստի և կարելի չէ ասել, վոր բանվորի դրությունը Լատվիայում շատ ավելի վատ է, քան 1913 թվին եր, յերբ Լատվիան դեռևս գտնվում էր ցարական Ռուսաստանի կազմի մեջ:

Լատվիայում լավ է ապրում նա, ով շատ փող ունի և ով շահում է ուրիշների հաշվին, այսինքն լատիշ բուրժուազիան և կալվածատերերը, կուլակները, սպեկուլյանտները: Լատվիայում տեղի ունի աշխատավոր մասսաների ուժեղ միավորումն, և միևնույն ժամանակ բուրժուազիան չքավորության հաշ-

լակները), թե նրանք իրենց ուժերով ու միջոցով շենքեր կշինեն: Բատրակների մեծ մասը, այդպիսով, մնաց հողագուրկ:

Լատվիայի չքավոր-գյուղացին սկսեց հասկանալ, վոր ինքը խորամանկութեան գոհ ե գնացել և ընկել ե «գորշ բարոններին» թակարդը ու ել ավելի մեծ չափով կախում ունի նրանցից ու գտնվում ե նրանց լծի ասի: Բատրակներն ու չքավորները սկսեցին ծախսիւել իրենց գույքը և փախչել այդ հողամասից, ավելի լավ համարեցին նորեն բատրակ վարձվել: Այժմ Լատվիայում կրկին կա մոտ 200 հազար հողագուրկ գյուղացի: Հողագուրկների թիվը տարեց-տարի մեծանում ե: Լատվիայի բատրակը բուրժուազիայի խաբեյությունը, այդ ծաղրը չի մոռանա:

Բայց լավ չե նաև միջակ գյուղացու դրությունը Լատվիայում: Ահա ինչ ե գրում «Յառնակաս Զինյաս» լատիշ լրագիրը՝ «Գյուղի ծանր դրությունը» կրող հոդվածում: Մենք այդտեղ կարդում ենք — «Յեթե այս ձմեռ գլուխ հանենք, ապա ևս մի յերկու տարի կարող ենք գոյություն ունենալ»: Այնուհետև լրագիրը հայտնում ե, վոր Լատվիայում տեղ-տեղ լավ բերք ե յեղել գարու և կարտոֆիլի: «Բայց, — գրում ե լրագիրը, — ինչի՞ ե պետք գարու և կարտոֆիլի այդ բերքը, յերբ ներկա գներով և նույնիսկ ամբողջ բերքը ծախելով չի կարելի վճարել պարտքի միայն տոկոսները, ել չենք ասում հարկերի մասին, և այլ պարտքերի ու գույքերի մասին: Գյուղացու համար պարզ ե,

վոր մուրհակների շղթայից նրան չի փրկի վոչ կտավատը, վոչ գարին, վոչ կարտոֆիլը: Իսկ գարին ու կարտոֆիլը մինչև այժմ համարվում եին գյուղացիութեան փողային ապրանք»: Այդպիսի տողեր ստիպված ե յեղել գրելու բուրժուական լրագիրը:

Միջակ գյուղացու դրությունը Լատվիայում ավելի ևս վատ ե: Լատվիայում քանի գոյություն կունենաներկա իշխանությունը, լատիշ գյուղացին պարտքերի ծանրությունից, — կարիճներից չի կարող ազատագրվել:

Լատվիայի բանվոր դասակարգի դրությունը շատ բանով տարբերվում ե լատիշ գյուղացիութեան աշխատավոր մասնանների դրությունից: Ով գործ ունի, նա դեռ մի կերպ կարողանում ե ապրել: Բանվորը Լատվիայում ամսեկան աշխատում ե միջին հաշվով, մեր փողերով, 25—30 ուրլի: Բայց գները մինչպատերազմյան գներից չափազանց բարձր են: Ուստի և կարելի յե ասել, վոր բանվորի դրությունը Լատվիայում շատ ավելի վատ ե, քան 1913 թվին եր, յերբ Լատվիան դեռևս գտնվում եր ցարական Ռուսաստանի կազմի մեջ:

Լատվիայում լավ ե ապրում նա, ով շատ փող ունի և ով շահում ե ուրիշների հաշվին, այսինքն լատիշ բուրժուազիան և կալվածատերերը, կուլակները, սպեկուլյանտները: Լատվիայում տեղի ունի աշխատավոր մասսանների ուժեղ միավորումն, և միևնույն ժամանակ բուրժուազիան չքավորութեան հաշ-

վին շահում ե՛ շահագործելով, սպեկուլյացիա կատարելով:

Լատվիայի պետութիւնը ընթանում ե նույն ուղիով, վորով ընթանում են և մյուս փոքրիկ բուրժուական պետութիւնները, ինչպես են՝ Եստոնիան, Ֆինլյանդիան և այլն:

ԱՆԳԼԻԱՆ ԼԱՏՎԻԱՅԻՆ ԳՐԳՌՈՒՄ Ե ՄԵՐ ԴԵՐ

Լատվիան ևս, ինչպես և Լեհաստանը, Եստոնիան ու արևմտյան մեր մյուս հարևանները, խաղալիք ե Անգլիայի ձեռքում: Անգլիան ինչ վոր հրամայի, Լատվիան ստիպւած ե կատարելու: Անգլիան ամեն տեսակի միջոցներով ճգնում ե հասնել այն վիճակի, վոր Լատվիան դառնա միանգամայն հլու դործիք իր ձեռքում: Այդ նպատակով եր, վոր Լատվիայում ֆաշիստական հեղաշրջման փորձ արվեց, Լատիշ ոֆիցերներից մեկը ապստամբութիւն բարձրացրեց, վորպեսպի տապալե Լատվիայի կառավարութիւնը և ստեղծե ֆաշիստական իշխանութիւն, աջ, սեհարյուրակային իշխանութիւն: Բայց դա նրան չհաջողվեց: Իսկ ինչպես վերաբերվեց դրան Լատվիայի կառավարութիւնը: Զինվորական դատարանը այդ ոֆիցերին արդարացրեց: Մինչդեռ այդ նույն ժամանակ կոմունիստներին, հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին Լատվիայում բանտարկում են, դազանարար ծեծում ու տաժանակիր աշխատանքի դատապարտում: Բուրժուական գինվորա-դաշտային դատարանը ֆաշիստներին

արդարացնում ե: Այդպիսով, Լատվիայի սոցիալ-դեմոկրատական կառավարութիւնը, ինչպես բուրժուականի ամեն տեսակ լակեյները, ֆաշիզմի դեմ իրող չի կռվում: Նա կռվում ե բանվորների և գյուղացիների դեմ: Դա ցուց ե տալիս, վոր Լատվիան կանգնում ե ֆաշիզմի ճանապարհի վրա, և ֆաշիզմը Լատվիային ևս, ինչպես և Լեհաստանին ու Լիտվային, կդարձնե Անգլիայի ոգնական՝ յերբ նա արշավանք կսկսի ԽՍՀՄ-յան դեմ: Մենք պետք ե դա լավ գիտենանք և չմոռանանք: Քանի վոր դրութիւնը այսպես ե, մենք պետք ե նաև գիտնանք, թե Լատվիան ինչպիսի բանակ ունի:

ԼԱՏՎԻԱՅԻ ՅԱՆԱԿԸ

Ռազմական ըարձրագոյն վարչորոշում: Պետական սահմանադրութիւն (կոնստիտուցիա) համաձայն, յերկրի գինված ուժերի գերագոյն պետը հանդիսանում ե հանրապետութիւն նախագահը: Պատերազմի ժամանակ նա յե նշանակում գլխավոր հրամանատարին: Խաղաղ ժամանակ ևս գոյութիւն ունի գլխավոր հրամանատարի պաշտոնը, սակայն վորպես սոսկ զորապետի պաշտոն: Խաղաղ ժամանակ զորապետի վրա յեն ծանրացած զորքի ուսուցման և նախապատրաստման հարցերը: Զորապետին յենթարկվում ե նրա շտաբը, վորը իսկապես հանդիսանում ե Լատվիայի զորքի գլխավոր շտաբը:

Տեղական ուսումնական վարչորոշումները: Ամբողջ յերկիրը բաժանված ե 15 ռազմական ռայոնների և

33 զինվորակոչական բաժինները: Յուրաքանչյուր ուս-
յունի գլուխ ե կանգնած ուսումական պետը, վորի պար-
տականութունները սահմանափակվում են զինակոչի
հաշվարկությամբ:

Ձորի կազմը, ֆաևակոթյունը: Սաղաղ ժամանակ
Լատվիայում կա — 4 հետևակ դիվիզիա, 1 կավալե-
րիական գունդ, ծովային և ողային սորմիդ և տեխ-
նիկական գործասեր՝ ընդամենը 20.000 մարդ:

Բացի այդ, Լատվիան ունի գորացր-
ված բանակ, վոր կարող ե հավաքվել ըստ առաջին
պահանջման: Այդ սեղերվում 3 տարի ժամկետով գանը-
վում են բոլոր նրանք, ովքեր անցել են գործնական
զինվորական ծառայություն: Գանի վոր դրանք կարող
են հրացանի տակ կանչվել ցանկացած ժամանակ,
ուստի և Լատվիայի զինվորական վարժված ուժերը,
այդպիսով, կազմում են ամենաշատը 200 հազար մարդ:

Բայց բուրժուազիան հաստատապես ասել չի կա-
րող, թե արդյոք Լատվիայի զինվորները մեր դեմ
կկռվեն: Չե վոր դեպքեր են յեղել, յերբ Լատվիայի
բանակի մի քանի գորամասեր քաղաքացիական պա-
տերազմում հրաժարվել են դուրս գալ Սորհրդային
իշխանության դեմ: Իսկ այժմ մենք հաճախ կարողում
ենք լատիշ լրագրներում այն մասին, վոր զինվորները
յենթարկվում են նույն փիճակին, ինչպես և բանվոր-
ներն ու գյուղացիները:

Լատվիայի բանտերում լատիշ զինվորներից շատերն
են տառապում: Մեծը, նազայիկան իշխում են Լատ-
վիայի բանակում:

Լատվիայի բանակի զինվորները կազմում են գըլ-
խավորապես գյուղացիները: Բանվորներն ու բատրակ-
ները նրանում փոքրամասնություն են կազմում:
Դիտակից աշխատավորները, Լատվիայի գիտակից զին-
վորները, պատերազմի դեպքում մեր դեմ ինարկե-
չեն կովի: Լատվիայի բանակում կլինի առողջ ճեղք-
վածք: Բայց պետք ե հիշել, վոր Լատվիայի բանա-
կում անգիտակիցներ շատ կան: Նրանց միշտ ել
մշակում, վարժեցնում են: Դիսցիպլինը — խիստ և:
Յեվ սկզբում բանակը կարող ե ծառայել բուրժուա-
զիայի ձեռքում վորպես հլու գործիք՝ մեր դեմ: Այնու-
հետև Լատվիայի բանակի հետ կլինի նույնը, ինչ յեղավ
ուրիշ բանակների հետ, յերբ նրանք կովում եյին մեր
դեմ: Բանվորներն ու զինվոր-գյուղացիները կհասկա-
նան, վոր իրենց շահը պահանջում ե լինել մեր կողմը,
մեզ հետ, և իրենց շահիկները դարձնել ընդդեմ իրենց
բուրժուազիայի, ընդդեմ իրենց ոֆիցերների՝ բուր-
ժուազիայի այդ դավակները:

Սպաների կազմը: Բարձրագույն, ավագ և մասամբ
միջին հրամկազմը ամբողջապես բաղկացած ե հին
ռուսական սպաներից (ոֆիցեր): Ներկայումս սպայա-
կան կազմը լրացվում ե Լատվիայի և արտասահմանի
ուսումական դպրոցները ավարտողներով: Գլխավոր
շտաբի սպաներ ընդունվում են նրանք, վորոնք ավարտել
են յերկամյա բարձրագույն ճեմարանական կուրսերը
և կամ ավարտել են արտասահմանում բարձրագույն
ուսումական ճեմարանները:

Բնակչութիւնն ուսումնականացումը: Զինվորագրական օրենքի համաձայն բոլոր դպրոցների աշակերտները պարտավոր են հենց դպրոցում սովորել ուսմական գործը: Բնակչութեան ուսումնականացման գործի մեջ գլխավոր դեր է կատարում «Յերկրի պաշտպանութեան կազմակերպութեան» կոչված ֆաշիստական ուսումնական ընկերութեանը («Այգսարգի»), վորի անդամների թիվը հասնում է 40.000-ի: Այդ ընկերութեանը ունի զուտ ուսումնական բնույթ և հիշեցնում է ֆիննական «Շյուտցկորը»: Ընկերութեան տեղական ճյուղերի անդամները կազմում են բաժնյակներ, դասակներ, վաշտեր, գումարտակներ և գնդեր: Այգսարգի գնդերի թիվը հասնում է 19-ի, այսինքն հավասար է Լատվիայի գավառների թվին: Ընկերութեան անդամները շարաթական 3—4 անգամ ուսումնական պարապմունքներ են ունենում:

* * *

Լատվիան միայնակ պատերազմի դուրս գալ մեր դեմ — իհարկե յերբեք սիրտ չի անի: Լատվիան գոյութեան ունի միայն մեր շնորհիվ: Բայց Լատվիայի բուրժուազիան իր քսակի ժամանակավոր շահերը վեր է դասում Լատվիայի ինքնուրույն գոյութեանը: Նա Լատվիան ծախում է ուրիշ յերկրների կապիտալիստների և դրա հետ մեկտեղ ծախում է իր ինքնուրույնութեանը: Լատվիան այդպիսով կարող է ընկնել իմպերիալիստների ճանկը, և իմպերիալիստները նրան կըջեն մեր դեմ: Ներկայումս Անգլիան աշխատում է

Լատվիային այդ իմաստով պատրաստել: Յեթե Լատվիան դնա այդ ճանապարհով, կշարգվի:

Մենք պատերազմ չենք ուզում: Մենք առաջինը չենք սկսի պատերազմը: Բայց մենք պետք է գիտենանք մեր թշնամիներին և մեր դաշնակիցներին: Լատիշ բուրժուազիան — մեր թշնամին է: Լատվիայի բանվորներն ու գյուղացիները — մեր բարեկամներն են: Մենք ուզում ենք Լատվիայի հետ հաշտ ապրել: Իսկ պահանջում ենք թե մեր և թե Լատվիայի շահերը: Բայց յեթե Անգլիային հաջողվի մեր դեմ դուրս բերել Լատվիային և մեր այլ հարեաններին, մենք կարող կլինենք խիստ և վճռական հարված հասցնել Լատվիայի բուրժուազիային: Այն ժամանակ ներկա Լատվիային կփոխարինե մեր դաշնակից բանվորագյուղացիական խորհրդային Լատվիան:

ԼԵՀԱՍՍԱՆ

Ժամանակակից Լեհաստանը վորպես պետութիւն, կազմակերպվել է 1917—18 թ.թ. հեղափոխութեան ժամանակ, այն հողամասերից, վորոնք մինչ այդ պատկանում էին նախկին ուսական, ավստրիական և գերմանական կայսրութիւններին: Լեհաստանի նոր կազմակերպված կառավարութիւնը, վորին գլուխ եր կանգնած նրա այժմյան ղեկավար Պիլսուդսկին, միանգամից բռնեց իմպերիալիստական-համալսական քաղաքականութեան ուղին, ունենալով իր ձեռքի տակ նորաստեղծ լեհական զորքը, վորը կազմվել եր Պիլսուդսկու և Գալլերի լեզիոններից: Գրավելով Լիավայից, Բելուսիայից, Ուկրայինայից, Վերին Գալիցիայից, Վերին Սիլեզիայից մի շարք շրջաններ, Լեհաստանը 1921 թվի վերջում իրտո հեռացել եր իր ազգաբնակչան սահմաններից և անցել եր այդ սահմանները: Ներկայումս Լեհաստանի տարածութիւնը բռնում է 318,000 քառակուսի կիլոմետր և ունի անագին սահմանագիծ (մոտ 4800 կիլոմետր): Անտանտան ցանկանալով ստեղծել մի ամբողջական պատնեշ Արևմտյան Յեվրոպայի և ԽՍՀ Միութեան մեջ, և ընդա-

ռաջեց Լեհաստանին: 1922—24 թ.թ. ընթացքում Ազգերի Լիգայի և Հաագայի տրիբունալի վորոշումներով ճանաչվեցին Լեհաստանի իրավունքները Վերին և Տեշինի Սիլեզիայում: ԽՍՀ Միութեան սահմանը 1412 կիլոմետր յերկարութեամբ, սահմանված է Ռիգայի խաղաղութեան դաշնագրով 1921 թվին:

Ընդարձակելով իր սահմանները ուրիշ ազգերի հաշվին, Լեհաստանը մի կողմից շեշտում է հարևանների թշնամական վերաբերմունքը դեպի ինքը և, մյուս կողմից, ցանկանալով մեծ պետութիւն համարվել, վճռեց կազմակերպել ուժեղ զորք, վորը ընդունակ լինի վոչ միայն պաշտպանելու համալսական կրները, այլ և կարողանա ապագայում իրագործել լեհացիների բաղձանքը, այն է՝ վերականգնել Լեհաստանը 1772 թվի սահմաններում:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Անունով Լեհաստանը բուրժուական պառլամենտական հանրապետութիւն է, իսկ փաստորեն Լեհաստանը պահում է իր ձեռքի մեջ նրա այժմյան ղեկավար Պիլսուդսկին: 1921 թվականի կոնստիտուցիայի համաձայն, իշխանութիւնը յերկրում պատկանում է ազգին, վորի որգաններն են սենատը և սեյմը, վորոնք ներկայացնում են որեսպի իշխանութիւն: Սեյմը և սենատը ընտրվում են հինգ տարով և հրավիրվում են ամեն տարի վոչ ուշ հոկտեմբերից սովորական նստաշրջանի՝ բյուջեն հաստատելու զորքի

քանակութիւնը վորոշելու և ընթացիկ հարցեր քննելու համար: Սենատը և սեյմը կարող են արձակվել իրենց ժամանակը լրանալուց առաջ հանրապետութեան նախագահի կարգադրութեամբ և սենատի որդեգրական թվի $\frac{2}{5}$ -ի համաձայնութեամբ:

Գործադիր իշխանութիւնը պատկանում է նախագահին, վորը ընտրվում է յոթ տարով ազգային ժողովի կողմից, այսինքն՝ սենատի, սեյմի և մինիստրների խորհրդի միացյալ ժողովում: Վարչական իմաստով Լեհաստանը բաժանված է 18 վոյեվոդութեան (նահանգների), գավառների, քաղաքային և գյուղական գմինների և կալվածատիրական ուսյոնների (գորշարի գվորսկե):

ԼԵՀԱՎԱՆ ԲՈՒՐԺՈՒՍՁԻԱՆ ՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ ՅԵ ԴՍՐՁՐԵՆ ՈՒՐԻՇ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեհաստանի բնակչութիւնը մոտ 32 միլիոն է: Իրա մի յերրորդ մասից ավելին բելուսներ են, ուկրայինցիներ, ուսներ, հրեյաներ, գերմանացիներ և լիտվացիներ: Նրանց դրութիւնը շատ ծանր է՝ նրանց ցանկանում են գորով լեհացնել — հետապնդում են նրանց հավատը, լեզուն, փակում են ազգային դպրոցները, ցրիվ տալիս նրանց հասարակական կազմակերպութիւնները: Այդ հալածանքը ճնշված ազգութիւնների մեջ խիստ ատելութիւն է գարթեցնում տիրող լեհական բուրժուազիայի նկատմամբ:

Ազգային հարցը Լեհաստանում շատ սրված է: Լեհական բուրժուազիան զրգուում է լեհերի ազգային

թշնամութիւնը ուրիշ ազգութիւններին նկատմամբ, այդպիսով ձգտելով խանգարել զանազան ազգութիւնների աշխատավորների միացմանը, իսկ դա նրան հնարավորութիւն է տալիս ավելի ևս հաջողութեամբ հարձակման դուրս գալ բանվորների և գյուղացիների դեմ: Լեհաստանի մեայն բանվորների և գյուղացիների հաղթանակը իրենց դասակարգային թշնամու՝ բուրժուազիայի վրա — կադատագրի ու հավասար իրավունքներ կպարգևի Լեհաստանի ճնշված ազգութիւններին:

ԳՅՈՒՂԱՎԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանի բնակչութեան $\frac{2}{3}$ մասը պարապում է միայն գյուղատնտեսութեամբ, վորը յերկրի արեւմտյան մասում ծաղկած է, իսկ արեւելյան շրջաններում — վոչ: Գյուղատնտեսութիւնը դեռևս կազդուրված չէ համաշխարհային պատերազմի քայքայումներից, բայց վերջին տարիները ընթացքում սկսել է վերականգնել: Ամենից շատ տարածված են հաճարի ցանքերը, յերկրորդ տեղը բռնում է վարսակը: Շատ են գրադվում նաև կարտոֆիլի և շաքարածակնդեղի մշակութեամբ:

Լեհաստանը հարուստ է անտառով, բայց կալվածատերերն ու կուլակները իրենց ձեռքն են գցել անտառների մեծ մասը, դրա հետևանքով ել գյուղացիական լայն մասսաները նեղվում են վառելանյութի խիստ պակասութիւնից:

Իսկ ինչո՞ւ յե գյուղացիութեան դրութեանը որեցորդ վատթարանում:

Բոլոր գյուղացիները 15 տոկոսը հող բոլորովին չունեն: Գյուղացիների հսկայական մեծամասնութեանը ունի միայն փոքրիկ հողամասեր: 10 միլիոն հեկտար հող գտնվում է լեհական 20.000 պաների ձեռքին: Իսկ 1.600.000 գյուղացիական տնտեսութեաններ ունեն 4 միլիոն հեկտար հող: Պարզ եթե լեհաստանում ով է հողի տերը: Միջին հաշվով— 1 կալվածատիրոջը ընկնում է 500 հեկտար հող, իսկ գյուղացիական տնտեսութեանը ընկնում է $2\frac{1}{2}$ հեկտար: Իսկ ինչ՞ճան կան հողագուրկ գյուղացիներ, բատրակներ: Բայց յեթե դրան ավելացնենք այն անագին հարկերը, վոր վճարում են գյուղացիները, — հասկանալի կլինի, թե ինչ ծանր պայմաններում է ապրում գյուղացին լեհաստանում:

Կալվածատիրական քանհաճույքը ել ավելի յե ուժեղացնում դասակարգային պայքարը գյուղում: Այսոր՝ այստեղ, վաղը՝ մի ուրիշ տեղ պայթում են գյուղացիական ապստամբութեաններ: Բայց աղայական կնուտը դաժանորեն է պատժում բոլոր անբավական տարրերին: Շատ արյուն են թափել լեհաստանում գյուղը: Բայց շտիկներով ու դադանակով հանդատացնել չի կարելի քաղցած գյուղացուն:

1918 թվին, յերբ Յեվրոպայով պատույտ գործեց հեղափոխութեան ալիքը, գյուղացիները համոզված եյին, վոր բուրժուազիայի վերջն հասել է: Գյուղացիները պահանջեցին, վորպեսզի հողը հանձնվի գյուղացիներին: Լեհական կառավարութեանը, հեղափոխութեանից խուսափելու համար, հրատարակեց հողային նոր օրենք (1919 թ. հուլիս 10): Բայց կալվածատերերը, ի հարկե, խաբեցին գյուղացիներին:

Այդ օրենքը պետք է պակասեցնեի խոշոր հողատիրութեանը: Որենքով սահմանված է, վոր ամենաշատ հողատիրութեանը պիտի լինի 160 հեկտար, իսկ ավելորդը պետք է բաժանվի հողի կարիք ունեցողներին:

Բայց կալվածատերերը իրենց չեն զրկել, նախ՝ հողը չի խլվում ձրի, այլ դրա դիմաց լավ փրկանք (զինը, փող) է արվում, յերկրորդ՝ այդ փրկանքը գյուղացին պետք է իսկույն և յեթ վճարի, յերկրորդ՝ շատ դեպքերում կալվածատերերին թողնվում է վոչ թե 160, այլ 400 հեկտար: Յեվ, վերջապես, կառավարութեան հանդեպ ունեցած իրենց առանձին «ծառայութեաններ» համար շատ կալվածատերեր ազատվում են հողի ավելցուկը հանձնելու պարտականութեանից:

Այդպիսով, սահմանված օրենքից վոչինչ չի մնացել — ամեն ինչ համարյա առաջվա պես է: Հողամասերը ընկան հարուստ կուլակ-գյուղացու ճանկը, վոր կարող եր իսկույն վճարել նրանց համար: Աղքատ գյուղացու վիճակը վոչնչով չլավացավ:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՐԻՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ հաջողութեամբ են մշակվում քարածուխի լսողոր հանքերը, նավթը, աղը, մետաղի հանքերը, վորոնք և կազմում են Լեհաստանի արդյունաբերութեան զարգացման հիմքը:

Արդյունահանած քարածուխի քանակը դեռ 1924 թ. հասնում էր մինչպատերազմյան չափին: Լեհաստանը հարուստ է նաև նավթով: Արդյունահանվող նավթի քանակը տարեց-տարի մեծանում է, բայց առայժմ չէ հասել մինչպատերազմյան չափին: Նավթի համարյա ամբողջ արդյունահանութեանը գտնվում է ոտարյան լճերից կապիտալի ձեռքում:

Տեկստիլ արդյունաբերութեան մեջ զբաղված են 155.000 բանվորներ: Մինչև պատերազմը այդ արդյունաբերութեան սպառանքները տարածվում էին ամբողջ Ռուսաստանում: Բայց այժմ այդ շուկան չկա: Վորովհետև Լեհաստանը չի ցանկանում առևտրական նորմալ հարաբերութեաններ ունենալ ԽՍՀՄ-յան հետ: Իրա համար ել Լեհաստանը ստիպված է կրճատել իր արտադրութեանը:

Մետաղագործական արդյունաբերութեանը շատ դանդաղ է զարգանում, քանի վոր չկա յերկաթի հանք, ինչպես և չկա շուկա՝ նման սպառանք վաճառքի հանելու համար: Բիմիական արդյունաբերութեանը արտադրում է սողա, ծծմբաթթու, արհեստական պարատանյութեր, ազոտային և պայթուցիկ նյութեր:

Արդյունաբերութեան այս ճյուղը ապահովված է հումությով և կարող է լավ զարգանալ:

Կառավարութեանը մեծ ուշադրութեան է դարձնում ռազմական արդյունաբերութեան վրա: Պատրաստվելով պատերազմի, Լեհաստանը մեծ գումարներ է ծախսում ռազմական գործառնանների կառուցման և սարքավորման վրա:

ԲԱՆՎՈՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանվոր դասակարգի դրութեանը շատ ծանր է: Նրա աշխատավարձը քիչ է, բանվորական որը — 10 ժամ, աշխատանքի պաշտպանութեան — բոլորովին չկա: Բնակարանային պայմանները անտանելի ծանր են, Ամեն ինչ թողնված է կապիտալիզմի քմահաճույքին: Արդյունաբերութեան մեջ գոյութեան ունեցող կրիզիսի հետևանքով ավելանում է և գործազրկութեանը: Բացի այդ, գործ ունեցող բանվորների մի զգալի մասն ևս շաբաթական աշխատում է միայն 3—4 օր:

Պրոֆմիութեանները Լեհաստանում բաժան-բաժան են և թույլ, ուստի և չեն կարողանում պաշտպանել բանվորների շահերը: Շահագործման դեմ մղվող պայքարում բանվորների գլխավոր զենքը գործադուլն է, վերջին տարիներս Լեհաստանում շատ գործադուլներ յեղան: Յեվ շատ անգամ բանվորների գործադուլները վիժեցրել են Լեհական «սոցիալիստները» — բանվոր դասակարգի շահերի դավաճանները:

Լեհական բանվոր դասակարգը անցել է դասակարգային պայքարի լավ դպրոց, վոր նա սկսել է դեռ անցյալ դարի վերջից:

Լեհական բանվորը պատրաստ է իր խոսքը ասելու:

ՀԵՂԱՓՈՆԱԿԱՆ ՇԱՐՖՈՒՄԸ

Գաղաքական կուսակցություններ Լեհաստանում շատ կան, բայց բանվոր դասակարգի միակ հեղափոխական կազմակերպությունը կոմունիստական կուսակցությունն է: Աշխատավորության նկատմամբ ամենատուր և դավաճանական դեր է կատարում սոցիալիստների լեհական կուսակցությունը (ՄՊԿ), Այդ կուսակցությունը բանվորների ու գյուղացիների կատարի թշնամին է:

Բանվոր դասակարգի պայքարը ղեկավարում է Լեհաստանի կոմունիստական կուսակցությունը, վոր կազմվել է 1918 թվին: Նրան պաշտպանում են հեղափոխական բանվորները: Նա ստիպված է աշխատելու անտանելի ծանր պայմաններում: Նա աշխատում է թագստում և յենթակա յե դաժան հալածանքի՝ կառավարության կողմից: Հարյուրավոր կոմունիստներ տառապում են բանտերում, բայց նրանց տեղ կուսակցության շարքերն են լցվում նոր ինքնազոհ մարտիկներ: Լեհական բուրժուազիան կատաղում է, առաջավոր բանվորներին և գյուղացիներին բանտերն է լցնում, նույնիսկ սպանում: Սպիտակ տեղորը Լե-

հաստանում հասել է չտեսնված չափերի: Մրա համար էլ առանձնապես կարևոր է բանվորների, գյուղացիների և տղաչին փոքրամասնությունների միասեղ պայքարը իշխանություն համար, հողի համար, ազգային ազատագրության համար: Նրանց դասակարգային դաշինքը կապահովի հաղթանակն այդ կուսում:

Հեշտ չի լինի կռիվը բուրժուազիայի դեմ: Կոմունիստական կուսակցությունը ճիշտ ուղղություն է տալիս — հաղթել կարելի յե բանվորների, գյուղացիների և ճնշված ժողովրդների աշխատավոր մասսաների յեղբայրական դաշինքի միջոցով: Այդ գործի տակ Լեհաստանի պրոլետարիատը դուրս կգա կուսի՝ մինչ վերջնական հաղթանակ:

ՁԵՆՎԱԾ ՈՒՃԵՐԸ

1) Բարձրագույն ռազմական մարտաքյան կազմակերպությունը: Հանրապետության նախագահը հանդիսանում է զինված ուժերի գերագույն պետը և ղեկավարում է զորքերին ռազմական միևնույնության միջոցով, վորը անմիջապես կառավարում է պետությունը: Վինված ուժերը և իր գործնեյություն համար պատասխանատու յե կոնստիտուցիայի և պարլամենտի առաջ: Մայիսյան հեղաշրջումից հետո (1928 թ.), վերը իրագործեց Պիլսուզսկին, նրա համար ստեղծեցին զորքերի գլխավոր տեսչի պաշտոն և նա պատերազմի ժամանակ պիտի հանդիսանա լեհական զորքի գլխավոր հրամանատարը:

Ռազմական շինարարութեան հիմնական հարցերը լուծման համար ընդհանուր պետական մասշտաբով նախագահին կից կա «Պետութեան ուղարկանութեան կոմիտե»:

2) Տեղակալն ուսումնական վարչութիւնները: Ռազմա-վարչական իմաստով, Լեհաստանը բաժանված է 10 կորպուսային շրջանների: Այդ շրջանների գլուխ են կանգնած շրջանային հրամանատարները, վորոնք յենթարկվում են անմիջապէս ռազմական մինիստրին: Պատերազմի ժամանակ շրջանային հրամանատարները չեն դառնում կորպուսների հրամանատարներ, այլ միայն իրականացնում են գինահոջը և հոգում են զորամասերի նյութական կարիքները:

3) Զինված ուժերի կազմը յե՛վ ֆանսկուրքունը: Մինչև այժմ Լեհաստանում զորքի թիվը խաղաղ ժամանակի համար չի սահմանված: Ամեն տարի սահմանվում է, այսպէս սասած՝ զորքի բյուջետային թիվը՝ Լեհական զորքի և նավատորմի շինարարութիւնը 1930—1931 թ. ռազմական բյուջեյով կազմում է 838.216.226 զլոտի (զլոտին — 22 կոպ.): Նախահաշիվը ցույց է տալիս, վոր սպաների, յենթասպաների և զինվորների ընդհանուր թիվը է 265.871 մարդ, վորոնցից սպաներ՝ 17.905 մարդ, յենթասպաներ 37.000 մարդ և զինվորներ՝ 210.966 մարդ: Զորքի սպայական կազմի մեջ մտնում են. 1 մարշալ, 11 լրիվ գեներալներ, 36 զինվորական գեներալներ, 81 բրիգադային գեներալներ, 476 գնդապետներ, 875 փոխգնդապետներ,

2468 մայորներ, 5990 կապիտաններ և վաչտապետներ, 6550 պորուչիկներ և 1417 փոխպորուչիկներ: Զորամասերին է վերաբերում նաև սահմանապահ կորպուսը, վորը բաղկացած է իսկական ծառայութեան մեջ գտնվող սպաներից և զինվորներից: Սակայն սահմանապահ կորպուսի ծախսերի նախահաշիվը մտցրած է ներքին գործերի մինիստրութեան բյուջեյի մեջ և հասնում է 61.213.699 զլոտի: Սահմանապահ կորպուսը բաղկացած է 1051 սպաներից և 27.418 զինվորներից: Ֆինանսների մինիստրութեան բյուջեյի մեջ ևս կա ռազմական ծախսերի մի հոդված սահմանապահ զորքի համար, վորը գումար ռազմական բնույթ ունի: Այդ զորամասը բաղկացած է 275 սպաներից և 5477 զինվորներից և գտնվում է գերմանական և Չեխո-Սլովակիայի սահմանների վրա: Ռազմական նավատորմի շինարարութիւնը ըստ բյուջեյի կազմում է 40 միլիոն զլոտի, (անցյալ տարի 33.394.000 զլ.): Նավատորմի անձնակազմում կան 307 սպաներ, 800 յենթասպաներ, 2880 նավաստիներ և 155 զինվորական ծառայողներ:

Յեթե գումարները այդ թիւերը, կտեսնենք, վոր Լեհական զորքի թիվը հասնում է խաղաղ ժամանակ 304.079 մարդու, իսկ ծախսի գումարը՝ 922.699.195 զլ.: Այդ գումարը կազմում է ընդհանուր բյուջեյի 32%-ը: Յեթե ինկատի առնենք այն գումարները, վորոնք ծախսվում են ռազմական արդյունաբերութեան, յերկաթուղային շինարարութեան և զորքի այլ կարիքների

վրա՝ զանազան միջոցներով թշուղենքերից, կտեսնենք, վոր զինված ուժերի վրա արվող ծախսերը կազմում են ամբողջ պետական բյուջեի համարյա կեսը: Խաղաղ ժամանակ լեհական զորքը բաղկացած է 52 հետևակ գնդերից, 41 հեծյալ գնդերից, 50 հրետանու գնդերից, մոտ 700 սավառնակներից և քիմիական, սաայորնի և այլ ոժանդակ զորամասերից:

Լեհաստանում ամեն մի 90 բնակչին ընկնում է 1 զինվոր: Խորհրդային Միության մեջ 250 բնակչին ընկնում է 1 կարմիր-բանակային: Ռազմական ծախս Լեհաստանում ամեն մի բնակչին ընկնում է 11 ռուբլուց ավելի: Մեզ մոտ — մոտ 4 ռուբլի: Այժմ պարզ է, թե Լեհաստանի աշխատավոր մասսաների վրա ինչպիսի ծանր բեռ են կազմում ռազմական ծախսերը:

Դիսցիպլինան լեհական բանակում պահպանվում է կնուտով ու փայտով: Զինվորները զրկված են քաղաքացիական իրավունքներից:

Բացի մշտական բանակից, Լեհաստանում կան նաև կամավոր ռազմական կազմակերպություններ: Նրանց անդամների թիվը մեկ միլիոնից ավելի չէ: Նրանց կեսից ավելին զինվորական ուսում են առած:

Լեհական կառավարությունը մեծ գումարներ է ծախսում ռազմական տեխնիկայի զարգացման վրա: Լեհական բանակը շատ լուրջ սպառնալիք է կազմում ԽՍՀՄ համար: Դա մենք չպետք է մոռանանք և պետք է ուժեղացնենք մեր բանակը, մեր յերկրի ինքնապաշտպանությունը: Սակայն մենք գիտենք, վոր պա-

տերազմի դեսպերում Լեհաստանը ստիպված է լինելու մոբիլիզացիայի յենթարկել հնգաբարվոր բանվորների և գյուղացիների, վորոնց այժմ ճնշում է բուրժուազիան: Իսկ այժմ դժվար է նրանց խաբել հեքիաթներով՝ թե բոլշևիկները ուզում են Լեհաստանը իրենց յենթարկել: Նրանք արդեն գիտեն, թե ով է իրենց թշնամին, գիտեն, վոր իրենք յերկրի տերը կզառնան միայն այն ժամանակ, յերբ Լեհաստանը խորհրդային կզառնա:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԼԵՀԱՍՏԱՆԸ — Վ.ՏԱՆԳՍՎՈՐ ՀԱՐԵՎԱՆ Ե

1928 թ. մայիսին Պիլսուդսկին զինվորական հեղաշրջում կատարեց: Նա նորից իր ձեռքն առավ իշխանությունը զեկը: Նա ձգտում է Լեհաստանին միացնել մի շարք նահանգներ Ուկրայինայում (մինչև Դնեպրը), Բելոռուսիայում և մեր Միության ուրիշ մասերը:

Բանն այն է, վոր Ուկրայինայում և Բելոռուսիայում հողերի մի մասը առաջ պատկանում էր լեհ կալվածատերերին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այդ հողերը խլեցին և հանձնվեցին գյուղացիներին: Նույնպես և խլվեցին ֆաբրիկներն ու գործարանները, վորոնք պատկանում էին լեհ ֆաբրիկանտներին: Նրանք այդ մոռանալ չեն կարող և ձգտում են ուժով միացնել Լեհաստանին այդ հողերը, վոր պեսզի նորեն իրենց ձեռքը ձգեն իրենց նախկին կալվածներն ու ֆաբրիկները:

Նրանք չեն թագցնում, վոր ուզում են խեղդել մեր Խորհրդային իշխանությունը. չե՞ վոր մեր խոր-

հուրդները որինակ են ծառայում լեհ բանվորների ու գյուղացիների համար: Յեվ լեհական բուրժուազիան ուժգին պատրաստութուններ է տեսնում պատերազմի համար: Իսկ այդ գործում նրան ոգնում են Ֆրանսիան, Անգլիան և ուրիշ յերկրները — մեր յերգվյալ թշնամիները: Անգլիան փորձեց և այժմ էլ շարունակում է փորձել մեզ կովեցնել Չինաստանի հետ, կովեցնել Յապոնիայի հետ, խզել մեր խաղաղ բանակցութունները մերձբալտյան յերկրների հետ և նրանց մեր դեմ գրգռել:

Մենք միշտ էլ խաղաղ քաղաքականութուն ենք վարել. այդպես էլ կշարունակենք: Դեռ 1922 թվին յերբ մենք դիմեցինք մեր հարևաններին, նաև Լեհաստանին, կրճատել բանակը, — Լեհաստանը դրանից հրաժարվեց: Մենք պայմանագիր կնքեցինք՝ Լիտվայի, Թյուրքիայի, Գերմանիայի հետ այն մասին, վոր փոխադարձաբար պարտավորվում ենք իրար վրա չհարձակվել: Յեվ Լեհաստանին նույնպես առաջարկեցինք մեզ հետ կնքել նման պայմանագիր: Բայց Լեհաստանը, զանազան պատրվակներով, դրանից հրաժարվում է: Ինչու, վորովհետև Անգլիային, Ֆրանսիային և ուրիշ կապիտալիստական յերկրներին ձեռնառ չէ, վոր մենք մեր հարևանների հետ խաղաղ հարաբերութունների մեջ գտնվենք: Յեվ Անգլիան, Ֆրանսիան ճնշում են գործ դնում Լեհաստանի վրա, վոր վերջինս մեզ հետ խաղաղ հարաբերութունների մեջ չգտնվի:

Այժմ Լեհաստանը Ֆրանսիայի և Անգլիայի դեկավարությամբ աշխատում է միացնել մերձբալտյան մեր հարևաններին և կազմել միասնական ֆրոնտ մեր դեմ: Ռումինիայի հետ Լեհաստանը կնքել է ռազմական դաշինք:

Այդպիսով, այժմ Լեհաստանում իշխանության գլուխ են կանգնած մեր յերգվյալ թշնամիները, վորոնք ձգտում են վոչ թե խաղաղ ապրել մեզ հետ, այլ պատրաստում են մեր դեմ պատերազմ: Լեհաստանը առայժմ չի համարձակվում մեզ վրա հարձակվելու: Նա դեռևս պատրաստ չէ պատերազմի համար: Նա վախենում է հենց իր բանվոր դասակարգից, վորը պատերազմի դեմ է և մեր կողմն է: Բայց չպետք է մոռանալ, վոր Լեհաստանը խաղալիք է կապիտալիստական յերկրների ձեռքին, վորոնք և Լեհաստանին կարող են ստիպել մեզ վրա հարձակվելու:

Մենք միշտ էլ կձգտենք խաղաղության: Իսկ յեթե լեհական բուրժուազիան բայց և այնպես հարձակվի մեզ վրա — մեր հարվածը խորտակիչ կլինի: Նրան դիմադրող հարված կհասցնեն վոչ միայն մեր կարմիր բանակը և ԽՍՀՄ, այլև Լեհաստանի, Գալիցիայի և Բելոռուսիայի միլիոնավոր ճնշված բանվորներն ու գյուղացիները: Յեվ այդ պատերազմը կվերջանա վոչ թե նրանով, վոր բարինների Լեհաստանի սահմանները կլայնանան, այլ նրանով, վոր կխորտակվի բուրժուազիան, կսահմանվի խորհրդային բանվորա-գյուղացիական Լեհաստան:

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռուսիան մինչև 1917 թիվը, կամ, ինչպես նրան անվանում են՝ «Հին Ռուսիան», ստորածված էր Դոնայի և Կարպատների միջև: Նրա կազմի մեջ մտնում էին՝ Մոլդավիան, Վալախիան և Հյուսիսային Դոբրուջա: 1913 թվին նա Բուլղարիայից բռնագրավեց Հարավային Դոբրուջան: Նախապատերազմական Ռուսիայի հիմնական նպատակն էր յեղել ընդարձակել իր սահմանները՝ շրջապատող պետությունների հաշվին: Բայց Ռուսիան կարողացավ իր այդ պլանը իրագործել միայն համաշխարհային պատերազմից հետո: Այդ պատերազմին, ինչպես նաև Վենզրիայի խորհրդային իշխանությունը ճնշելուն մասնակցելու համար (արշավանք Բուդապեշտի վրա 1919 թ.) Ռուսիան մեծ պետություններից ստացել է և կամ ուղղակի միացրել է իր յերկրին հողամասեր: Պատերազմի ժամանակ նա Ավստրո-Վենզրիայից խլեց մի շարք հողեր՝ Բուկովինա, Տրանսիլվանիա, Կրասինա, Մարմուրեշ և Բանատ: 1918 թվին նա բռնագրավեց Բեսարաբիան: Այդպիսով Ռուսիան, բռնագրավումների միջոցով իր ստորածությունը մեծացրեց $2\frac{1}{3}$ անգամ և այժմ բռնում

և 304.903 քառ. կիլոմետր: Մեր (Ուկրայինայի) և Ռուսիայի սահմանն է կազմում Դնեստր գետը:

ՈՎ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՌՈՒՄԻՆԻԱՆ

Ռուսիայի գլուխ է կանգնած թագավորը, վորը 1930 թվին խլեց իշխանությունը: Ռուսիայի պատկամենտը կազմված է սենատից և պատգամավորների պալատից: Կանայք և զինվորական ծառայողները ընտրողական իրավունքից զրկված են: Ամեն տեսակ խորամանկություններով, սարսափեցնելով, ձայնից զրկելով և ուրիշ միջոցներով պալատը կազմվում է կալվածատերերից, զինվորներից և հոգևորականներից:

Ռուսիան բաժանվում է գավառների: Մայրաքաղաքն է Բուխարեստ: Բեսարաբիայի զլխավով քաղաքը՝ Կիշինև: Ամեն մի գավառի գլուխ է կանգնած է պրեֆեկտ (ինչպես մեր նախկին վոստիկանապետներ): Քմահաճույքը, գյուղացիական բնակչությանը թալանելը, կաշառակերությունը չտեսնված չափերով ծաղկում են ուսումնական գյուղում: Գյուղացին չի նույնիկի վրա գանգատվելու տեղ չի գտնում: Մեծ չինոյնիկը պաշտպանում է փոքրին, վորը ապորինի միջոցներով իր ստացած յեկամուտներից բաժին է հանում իր մեծին:

ՄԱՂՐՈՒՄ ԵՆ ՌՐԻՇ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Բռնագրավումների հետևանքով, Ռուսիայի ազգաբնակչությունը ևս ավելացավ համարյա $2\frac{1}{2}$ անգամ

և հասնում է մինչև 18,000,000, Ամբողջ բնակչու-
թյան համարյա կեսը, մոտ 7 միլիոն, ուումիններ
չեն — բուկովինացիներ, բեսարաբիական մուլաուացի-
ներ, ռուսներ, ուկրաինացիներ, գերմանացիներ, վենգ-
րեր, հրեյաներ և այլն:

Միայն հին Ռուսիայում ազգաբնակչության
մեծամասնությունը ուումիններ են — 82 տոկոս: Նոր
բունազրաված բոլոր շրջաններում ուումինացիները
փոքրամասնություն են կազմում:

Չնայած դրան, նրանք ուումիններին համահավա-
սար իրավունքներ չունեն, այլ ապրում են խիստ
ճնշված պայմաններում և իրավագույն են: Բունազրա-
վելով նոր յերկրներ, ուումինական իշխանությունը
սկսեց այնտեղ իր կարգերը սահմանել: Իշխանության
գլուխ են կարգված ուումինական չինովնիկները և վոս-
տիկաններ: Փակում ու նեղում են լրագրերը, գործով
մտցնում են ուումինական լեզուն:

Նույնպիսի պատկեր է նաև Բեսարաբիայում:
Այստեղ վոչ-ուումինական լեզվով գրած ցուցանակի հա-
մար հարկ են պահանջում. ուսերին կամ ուկրաի-
ներեն լեզվով արտասանած ամեն մի բառի համար
տուգանում են: Հրեյական բնակչությունը յենթակա
յե ամեն տեսակի ծաղրի: Արյունալի պարբուրներ
(Չարգեր) այնտեղ հաճախ են տեղի ունենում, ինչ-
պես և հին Ռուսաստանում եր:

Այդ ծանր պայմանները տանել չկարողանալով,
ճնշված ազգություններին պատկանող հազարավոր

մարդիկ փախչում են Ռուսիայից: Վոչ միայն բան-
վորներն ու գյուղացիները, այլև ազգային փոքրա-
մասնությունների հարուստ բնակչության մի մասն ևս
հուսով է նայում ՍՍՀՄ-յան վրա, ուր բոլոր ժողո-
վուրդները իրավահավասար են, ապրում են խաղաղ
և անխռով:

Ռուսիական ախրանկան կամ, ինչպես նա այն-
տեղ անվանվում է, սիգուրանցան, վոստիկանու-
թյունը, դատարանները մեղադրում են բոլոր նրանց,
վորոնք հուսով են նայում ՍՍՀՄ-յան վրա, բոլոր չեխիզմի
վրա, և այդպիսիներին յենթարկում են դաժան պա-
տիժներին:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆՆԸ

Ռուսիայի բնակչության գլխավոր մասսան —
82 տոկոսը — պարապում է գյուղատնտեսությունը:
Հողի կեսից ավելին ցանվում է: Ռուսիայում մեծ
տեղ է բռնում անասնապահությունը: Խոտատեղերն
ու արոտատեղերը բռնում են հողի մոտ 1/4 մասը:
Հողը շատ բերրի յե:

Չնայած դրան, Ռուսիայի գյուղացիությունը
շատ աղքատ է ապրում: Տնտեսությունը վարում է
յետամնաց միջոցներով — յետադաշտյան սխտեմով,
համարյա նախապատմական խոթի ոգնությունը: Ռուսի-
ական կալվածատերերը շահագրգռված չեն, վոր գյու-
ղատնտեսությունը ծաղկի: Գյուղացու աղքատությունը
կալվածատերերին էժան աշխատավորներ է տալիս:

կալվածատերերը կարիք ել չունեն կապիտալներ ծախսելու իրենց գույքերի բարելավման վրա: Կալվածատերերը առանց այն ել մեծ յեկամուտներ են ստանում՝ շահագործելով ահագին քանակությամբ գյուղացիությանը:

Ռուսիանական գյուղացին մշակում է, մեծ մասամբ, սիմինդ (կուկուրուզա) և սնվում է մամայի-գայով (կուկուրուզայի ալյուրից պատրաստած շիլա): Նա այնքան աղքատ է, վոր կերակրվելիս հաց համարյա թե չի գործադրում: Հացը նա արտադրում է բացառապես ծախելու համար, վորպեսպի կարողանա վճարել այն ծանր հարկերն ու պարտքերը, վորոնց մեջ նա խրված է:

Գյուղացիական սակավահողությունը խեղդում է ռուսիանական գյուղացուն և թույլ չի սալիս, վոր նա դուրս գա մուրացկանի վիճակից: Միջին հաշվով, գյուղացիական մեկ ընտանիքին ընկնում է 2 կամ 3 հեկտար, իսկ մեկ կալվածատիրոջը — 900 հեկտար:

Սակավահողությունից ստիպված, ռուսիանական գյուղացին դիմում է կալվածատիրոջը՝ հող արենդով վերցնելու: Յեվ այդ դեպքերում գյուղացուն միշտ ել խարում են: Դա դժվար չէ, քանի վոր Ռուսիանայում բոլոր գյուղացիներն ել անգրագետ են: Կառավարությունը պիտմամբ ենրանց պահում մթության և տգիտության մեջ: Չինտվիկների և սովի հետ մեկտեղ, ռուսիանական գյուղում սարսափ են տարածում նաև հի-

վանդությունները: Ռուսիանական գյուղում յերեսաների կեսը մեռնում են, 7 տարեկան չդարձած:

Այսպիսի ծանր, քաղցած, իրավագուրկ դրության մեջ է գտնվում ռուսիանական գյուղացին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերությունը Ռուսիանայում շատ թույլ է զարգացած: Ռուսիանայի հողը հարուստ է նավթով, յերկաթահանքով, աղով: Ամենից շատ կա նավթ, բայց համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսիանայի թե նավթի արդյունահանությունը և թե ամբողջ արդյունաբերությունը մեծ չափով ընկան:

Ռուսիանայի արդյունաբերության մեծ մասը զբաղվում է ոտարների (վոչ ռուսիացիների) ձեռքում: Ռուսիանայի արդյունաբերության տերերը ոտարյերկրյա կապիտալիստներն են: Այսպես, որինակ, նավթի ամբողջ արդյունաբերության 85 տոկոսին տիրացած են ոտարյերկրյա կապիտալիստները: Յերկաթուղային գործը չափազանց քայքայված է: Ռուսիանական կառավարությունը, միջոցներ չունենալով, յերկաթուղիները հանձնել է ոտարյերկրյա կապիտալիստներին 30 տարով:

Համաշխարհային պատերազմի ժամանակ մեծ քանակությամբ հողեր ձեռք գցելով, Ռուսիանական կառավարությունը ի վիճակի չէ ստեղծելու առողջ տրնտեսություն, ստիպված է իր անտեսությունը ծախ-

ծխել ոտարյերկրյա կապիտալիստներին, ուստի և կատարել այն, ինչ նրանք հրամայում են:

Ռուսիանիայում կան մոտ 600,000 բանվորներ, վորոնց դրությունը շատ ծանր է: Աշխատանքի վերաբերյալ բոլոր որենքները ուղղված են ֆաբրիկանտներին պաշտպանելու կողմը: Արդյունաբերության մի քանի ճյուղերում գործադուլները արգելված են: Ութժամյա աշխատանք չկա:

Մի խոսքով, բոյարական Ռուսիանիայում բանվորը քարշ է տալիս վողորմելի գոյություն, ինչպես և գյուղացին:

ՀԵՂՍՓՈՅԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Ռուսիանիայի չափազանց ճնշված բանվոր դասակարգի և գյուղացիության համար մի յեղք է մնում — զայրույթ և ապստամբություն: Տարիներ շարունակ ծանր, քաղցած, անյել դրությունը գյուղացիությանը ստիպեց ապստամբել կալվածատերերի դեմ, գեներալական-կալվածատիրական իշխանության դեմ:

1907 թվին գյուղացիական ապստամբությունը բռնել էր համարյա ամբողջ Ռուսիան: Բայց այդ ապստամբությունը զինվորական միևնապես գեներալ Ավարեսկույի արնոտ ձեռքով խեղդվեց: Հարյուրավոր գյուղեր վոչնչացան արտիլերիական կրակով: 15,000 գյուղացիներ գնդակահարվեցին: Ահազին թվով մարդիկ գցվեցին բանտերը, հարյուրավորների խեղդաման արին Գունայ գետում, տասնյակ հազարավորներ մե-

ռան սովից: Շատ գյուղացիներ, այդ ապստամբության մասնակիցները, մինչև որս ել վիթում են տաժանակիր աշխատանքի բանտերում:

Հետագա ապստամբությունները ևս նույնպես արյունախեղդ արին: Գյուղացիական հայտնի ապստամբությունը Բեսարաբիայի Թաթար-Բունար գյուղում 1924 թվին նույնպիսի հետևանքներ ունեցավ:

Ռուսիանիայի բոլոր գյուղացիական ապստամբությունների անհաջողությունը բացատրվում է նրանով, վոր գյուղացիությունը կապված չի յեղել բանվորական շարժման հետ, Ռուսիանիայում չի յեղել ուժեղ կոմունիստական կուսակցություն, վորը կարողանար դեկավարել ամբողջ հեղափոխական շարժումը: Ռուսիանիայի կառավարությունը գիտի, վոր բանվորների ու գյուղացիների հաղթանակի համար պակասում է ուժեղ, կազմակերպված կոմունիստական կուսակցություն: Ահա թե ինչու բանվորական կազմակերպությունները և կոմունիստական կուսակցությունը Ռուսիանիայում միշտ ել յենթակա յեն դաժան հալածանքների:

ԲՍՆՏ, ՏԱՆՉԱՆՔ, ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒՄՆԵՐ

Ռուսիանական ախրանկան, «սիգուրանցան», յերկիրը պատել է իր ագենտների, շպիոնների ու պրովակատորների ցանցով և աշխատում է վորսալ բանվոր դասակարգի լավագույն առաջնորդներին: Դաշտային դատարանները, բանտերը, տանջումները, գնդակահա-

րումները, թագստից լսիելը—անա այնպայմանները, վո-
րոնց մեջ բանվոր դասակարգը և կոմունիստական կու-
սակցությունը ստիպված են կատարելու իրենց հեղա-
փոխական աշխատանքը: Դատում ու գնդակահարում են
մեկ-մեկ և մասսաներով: Ուրինակ, 1919 թվին դա-
տեցին միանգամից 108 կոմունիստների, 1920 թ.—48,
1921 թվին 270 և այլն: Այդ դատերի հետևանքը —
գնդակահարումներ և տաժանակիր աշխատանք:

Բանտարկվածները բանտերում յենթակա յեն
տմարդի տանջումների: Մեղադրյալներին բերում էին
դատարան (վորը դատում էր 270 կոմունիստներին)
այն աստիճան ծեծած, տանջած, վոր նրանք չէին կա-
րողանում վտարի վրա կանգնել: Դատարանի նիստից
հետո նրանց, շղթայվածներին, գցում էին կարցեր,
վոր շինված է այնպես, վոր նրանցում կարելի չե
գտնվել միմիայն կանգնած զրությամբ: Բանտարկ-
վածը այնտեղ պահվում է՝ ձեռքերին ու վտտե-
րին ծանր կանդալներ հագցրած: Վզին և փորին —
յերկաթե ծանր ողեր, վորոնք միմյանց հետ միա-
ցած են շղթայակապերով: Մեղադրյալները 1925 թ.,
դատին ներկայանալիս, այնքան էին նվաղած տան-
ջումներից ու քաղցից, վոր նրանք պակհած էին
նախկանների մեջ, և դատարանը նրանց հարցաքն-
նեց այդ վիճակում:

Ռումինիայի կոմունիստական կուսակցությունը
այժմ աշխատում է թագստում: Չնայած սարսափելի
հետապնդումներին, հալածանքներին, Ռումինիայում

կոմունիստները համառորեն առաջ են տանում աշ-
խատանքը և մեծ ազդեցություն ունեն բանվորների
ու գյուղացիների վրա:

ՁԻՆՎԱԾ ՌԻԺԵՐԸ

1) Ռազմական բարձրագույն վարչությունը: Ռու-
մինիայում, ինչպես և բոլոր բուրժուական յերկրնե-
րում, զինված ուժերի գլուխ համարվում է պետու-
թյան գլուխը, ներկա դեպքում՝ թագավորը: Վորպես
հատուկ ռազմական սպարառ, գոյություն ունի շաբը:
Փաստորեն զինված ուժերի ղեկավարությունը խա-
ղաղ ժամանակ՝ գտնվում է գլխավոր հրամանատարի
ձեռքում:

2) Տեղական ռազմական վարչությունները: Ամ-
բողջ յերկիրը ռազմա-վարչական գծով բաժանված է
7 ռազմական յերկրային շրջանների՝ յոթ գորաբա-
նակներ (կորպուսի) թվի համեմատ: Զորաբանակների
ռազմական շրջանները նույնպես բաժանված են զին-
վորագրական շրջանների, վորոնք մոտավորապես հա-
վասար են գավառի:

3) Զինված ուժերի կազմակերպությունը յնվ
բանակությունը: Զինված ուժերի մեջ մտնում են.
հետևակ և հեծյալ զորքերը, հրետանին, անխիկա-
կան-ինժեներային զորքերը, ոժանգակիչ զորամասերը,
ողային նավատորմիզը և ծովային նավատորմիզը:
Խաղաղ ժամանակ Ռումինիան պահում է 72 հետե-
վակ և 21 հեծյալ գնդեր:

4) Եյուզեյի կեսը գորհի վրա յե ծախսվում: 1931 թվի պետական բյուջեն կազմում է 32.500 միլիոն լեյ (325 միլիոն ուոլլի): Այդ գումարից ռազմական գործին հատկացված է 11 միլիարդ լեյ, այսինքն ավելի քան մի յերրորդը: Դրան պետք է ավելացնել քաղաքացիական գերատեսչութունների բյուջեյով ծախսվող մեծաչափ գումարները, որինակ 40.000-ի հասնող ժանդարմերիայի և սահմանապահ գործերի պահպանութունը, վորոնք ըստ եյության գորքի մի մասն են կազմում, ռազմական յերկաթուղիների և ճանապարհների շինությունը և այլն: Վերջապես բյուջեյի 20 տոկոսը վճարվում է արտասահմ. փոխառությունների տոկոս (մոտ 6 միլիարդ լեյ): Փոխառությունները համարյա ամբողջովին ծախսվել են սպառազինման և գորքի վրա: Այդ ծախսն էլ ըստ եյության ռազմական ծախս է: Այսպիսով Ռումինիայի պետական պաշտոնական բյուջեյի կեսից ավելին վատնվում է պատերազմի վրա: Հարկավոր է ավելացնել դրան նաև ռազմական բյուջեյի այն բազմամիլիարդ (լեյերով) գաղտնի ծախսերը, վորոնց մասին նորերս հայտարարեց պարզ կերպով այնպիսի մի հեղինակավոր վկա, ինչպես մարշալ Ավերեսկուն է:

Բոյարական Ռումինիան, ինչպես տեսանք, ուրիշների հողերը բռնազրավելու, փոքր ազգերին ճնշելու, բանվորներին ու գյուղացիներին շահագործելու յերկիր է: Բոյարների կառավարության բանակը ծա-

ռայում է նրա համար, վորպեսզի պահպանի բռնազրաված հողերը, վորպեսզի ճնշի աշխատավորության հեղափոխական շարժումը: Ահա թե ինչու Ռումինիան իր ուժերից ու միջոցներից վեր բանակ է պահում: Ռումինական բանակը խաղաղ ժամանակ ունի 164.000 մարդ, 1000 թնդանոթ, 370 այերոպլան:

Այդպիսի մեծ բանակը ի հարկ է մեծ բեռ է աշխատավորության շնքին: Ռումինիայում յուրաքանչյուր 10.000 մարդուն ընկնում է 100 զինվոր, իսկ մեր Միության մեջ յուրաքանչյուր 10.000 մարդուն ընկնում է միայն 41 կարմիրբանակային:

Ռումինական բանակի զրությունը ծանր է: Զինվորը որական ստանում է $1\frac{1}{2}$ ֆունտ հաց և ճաշ՝ մամուլիգա (կուկուրուզի ալյուրից պատրաստած կաշա). միս տրվում է յերբեմն-յերբեմն, իսկ շաքար համարյա թե բոլորովին չի տրվում: Հագուստը (որմունդիրովկան) և ռազմական նյութերի մատակարարումը վատ դրության մեջ է:

Ռումինիայում օֆիցերներ լինել կարող են միայն ռումինական կալվածատերերի ու կապիտալիստների վորդիները: Բացառություն է արված միայն ուսս բելոգվարդիականների համար:

Ռումինական բանակի զինվորները մեծ մասամբ անզրազեա են, քաղաքականապես տգետ են, յետամնաց: Բանակի զինվորների մեջ անզրազետները կազմում են կեսից ավելին: Նրանց չեն սովորեցնում գրագիտություն: Զինվորը ինչքան տգետ է, այնքան

հեշտ և նրան յենթարկել զիններալներին ու կարվածատերերին: Բանակում դիտցիպլինը ծանր է, դազանակային: Ձինվորը ծաղրի առարկա յե, նրան վերավորում են ամեն քայլավորում: Ամենափոքրիկ սխալի համար կամ աննշան հանցանքի համար նրան հանձնում են դաշտային դատարանի: Ռումինական բանակում մինչև այժմ գոյություն ունեն մարմնական պատիժներ: Քաղաքական իրավունքներով ռումինական զինվորը չի ոգտվում:

Ձինվորներին մշակում են ոֆիցերները և հոգևորականությունը: Ձինվորներին ներշնչում են հավատ առ աստված, սեր դեպի բոյարական Ռումինիան, անձնվեր ծառայություն թագավորին և կարվածատերական ռեժիմին, ատելություն դեպի բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումը:

ԻՆՉՈՒ ԹԵՆՔ ՀԱՇՏ ՉԵՆՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԷՆՏ

Բոյարական Ռումինիան ավագակորեն բռնազրավեց Բեսարաբիան: Բայց դա ևս նրան քիչ էր: 1918 թվին նա իր գործերն անցկացրեց Դնեստր գետը՝ խլելու համար ուկրայինական հողը՝ մինչև Ոդեսսա և Բուգ: Խորհրդային գործերը նրանց ջարդեցին և ստիպեցին յետ քաշվել:

Ռումինական կառավարության բոլոր գործողությունները համաշխարհային պատերազմից հետո ուղղված են ԽՍՀՄ-յան դեմ: Ռումինիան այն 14 պետություններից մեկն էր, վորոնց 1921 թվին Անգ-

լիան աշխատում էր դուրս բերել մեր դեմ: Պետլյուրայի, Գուլյալ-Գուլյայենկոյի, Տյուտյունիկի և Մախնոյի բանդաներին Ռումինիան ոգնում էր զենքով, փողով և հագուստով: Այդ բանդաները, ուկրայինական բանվորների և գյուղացիների կողմից լավ ջարդ կրելով, ապաստան գտան Ռումինիայում: Այստեղ ռումինական կառավարությունը նրանց կերակրեց, նորից կազմակերպեց ու ապա կրկին դուրս բերեց՝ Ուկրայինան կողոպտելու համար:

Ռումինիան միշտ գործում է կամ Ֆրանսիայի կամ Անգլիայի ցուցմունքով և կամ Ֆրանսիայի ու Անգլիայի ցուցմունքով: Այդ յերկու կապիտալիստական յերկրները Ռումինիայի վրա նայում են վորպես մի գործիքի վրա՝ Խորհրդային Միության դեմ պայքարելու համար: Յեվ Ռումինիան «ազնվորեն» կատարում է վարձկանի իր դերը՝ ընդդեմ մեր Միության: Բայց Ֆրանսիան զիտե, վոր Ռումինիան՝ մենակ թույլ է մեր դեմ: Դրա համար էլ նա ոգնեց (1922 թ.) և Ռումինիան ու Լեհաստանը ռազմական դաշնադիր կնքեցին ընդդեմ ԽՍՀՄ-յան: Ըստ այդ դաշնագրի, Խորհրդային Միության վրա հաղթանակ տանելու դեպքում, Ուկրայինան պետք է բաժանվի Ռումինիայի և Լեհաստանի միջև:

Խորհրդային յերկիրը միշտ էլ խաղաղ քաղաքականություն է վարում: Նա Ռումինիային ևս մի քանի անգամ առաջարկել է հավաքվել, վիճելի հարցերը քննել և լուծել խաղաղ կարգով:

1924 թվին, վերջապես, հաջողվեց բանակցութ-
յուններ սկսել ռուսինական կառավարութ-
յան ներկայացուցիչների հետ: Բայց հենց առաջին նիստին
նրանք հայտարարեցին, վոր կանցնեն հարցերի քննու-
թյան միայն այն պայմանով, յեթե ԽՍՀՄ-յունը
առանց այլևայլության հայտարարի, վոր ընդունում է
Ռուսինիայի իրավունքը Բեսարաբիայի վրա: Խորհր-
դային պատգամավորները դրան պատասխանեցին, վոր
իրենք իրավունք չունեն վճռելու Բեսարաբիայի ժո-
ղովուրդների բխտը: Մեր պատգամավորները առա-
ջարկեցին ընդհանուր ժողովրդական քվեարկութ-
յուն կազմակերպել Բեսարաբիայում: Թող ժողովուրդը վո-
րոշի, արդո՞ք ինքը ցանկանում է միանալ Ռուսին-
իային թե ԽՍՀՄ-յանը, և կամ ցանկանում է ապ-
րել ինքնուրույն: Ռուսինական կառավարութ-
յունը վախեցավ ազատ քվեարկութ-
յունից, գիտենալով, վոր քվեարկութ-
յունը չի լինելու հողուտ Ռուսինիայի,
ուստի և հրաժարվեց այդ առաջարկից և բանակցու-
թյունները խզեց:

Յեւ այսպես Ռուսինիայի թշնամական վերաբեր-
մունքը դեպի մեզ շարունակվում է մինչև այսօր:
Ֆրանսիայի և Անգլիայի ղեկավարութ-
յամբ Ռուսինիան ուրիշ պետութ-
յունների հետ դաշինքներ է կնքում
մեր դեմ:

Թե ինչպես է դինվում և պատրաստվում կովելու
մեր դեմ բոյարական (իշխանական) Ռուսինիան, այդ
մասին մենք ամեն ոք կարդում ենք լրագրներում:

Ռուսինիայում հրատարակվող վենգրիական «Բու-
դապեշտի Լապոկ» լրագիրը բերել էր փաստեր
այն ուղղական պատվերների մասին, վոր Ռուսին-
իան տվել է միայն 1930 թվին: Միմիայն Չեխո-
Սլովակիայում Ռուսինիան անցյալ տարի գնել է
600,000 հրացան, 30,000 գնդացի, 150,000 ձեռքի
ռումբ, 60 ուղղական այրուսկան 500,000 գաղային
դիմակներ և ահագին քանակութ-
յամբ պայթուցիկ նյութեր, հրետանու սպասք և
զինվորական խոհանոցներ:
Չեխո-Սլովակիայում Ռուսինիայի գլխավոր
մատակարարը Շկոդի գործարաններն են:
Թնդանութ-
յունը Ռուսինիային մատակարարում է
Ֆրանսիական Շնայդեր-Կրեզո ֆիրման:
Այս տարի այդ ֆիրման տալիս է
Ռուսինիային թնդանութներ ի հաշիվ
Ֆրանսիական կապիտալիստների
Ռուսինիային խոստացած փոխառութ-
յան:

Բայց մենք հանդիստ ենք: Մեր կարմիր բանակը
ուժեղ է: Նա կպաշտպանի մեր սահմանները:
Մենք գիտենք, վոր ամեն մի հարձակում
թանգ կնստի թե ռուսինական և թե
ուրիշ թագավորներին, — մեզ վրա
հարձակվելով, նրանք կզրկվեն
իրենց թագերից: Մենք հավատացած
ենք, վոր վաղ թե ուշ՝ Ռուսինիայի
տերը դառնալու յեն բանվորներն ու
գյուղացիները: Այն ժամանակ
ԽՍՀՄ-յան և Ռուսինիայի ժողովուրդ-
ների միջև կկնքվի յեղբայրական
դաշինք:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Ֆինյանդիա	5
Նստոնիա	24
Լատվիա	40
Լեհաստան	54
Ռուսիա	69

ԳԱԶԱՆՋԵՑԵՐ
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՁՐԻ.
ԴՐՄԵԼ՝ Москва, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏ
ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏ
ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

2013

« Ազգային գրադարան »
NL0038105

25 407.

87030

Цена 25 коп.

О. П. 4.



ОСОАВВНОХИМ
Наши соседняя
государства

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10